ԽՍՀՄ ՖԺԿ
ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ
ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 31 (ՍԽԵՄԱ Ա— 23)

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ՀՐԱՀԱՆԳ

ՅԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ (ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԲԱԺՆԻ) ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԵՎ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1938 Թ.

*Պատ. խմբ.* Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
*Թարգմ.* Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
*Սրբ.* Հ. ՄԱՅԻԼՅԱՆ

*«Սովետ. Հայաստան»-ի Հրատարակչության տպարան, Երևան.*
*Գլավլիտի լիազոր* Ա—4089 *Պատ.* 533. *Տիրաժ* 400

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

1. «Երրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժնի) պետական փոխառության» իրացումը կատարվում է ԽՍՀ Միության Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի № 332/152 և № 333/153 հրահանգներով սահմանված կարգով և պայմաններով:

2. Մինչ փոխառության իրացումն սկսելը՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչը, գլխավոր հաշվապահի հետ միասին, պարտավոր են կազմել իր շրջանի կամ քաղաքի բոլոր ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների ցուցակը և այդ ցուցակները սպասարկման համար բաշխել առաջին կարգի խնայողական դրամարկղների և իրեն՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի (գործառնության մասի) միջև: Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների վարիչներն ու գլխավոր հաշվապահները պատասխանատու յեն փոխառության իրացման հաշվառումն ու հաշվետվությունը խնայողական դրամարկղներում և կազմակերպություններում ճիշտ կազմակերպելու համար՝ ինչպես բանվորների և ծառայողների, նույնպես և գյուղացիների բաժանորդագրության գծով:

3. Խնայողական դրամարկղի ավագ վերահսկիչը (կամ նրա հսկողությամբ՝ խնայողական դրամարկղի հատկապես առանձնացված աշխատողը) պարտավոր է սպասարկվող ձեռնարկություններից, հիմնարկություններից և կազմակերպություններից ստանալ հետևյալ տեղեկությունները՝ ա) բանվորների և ծառայողների քանակը, բ) աշխատավարձի ֆոնդն անցած ամսում, գ) աշխատավարձի վճարման ժամկետը, դ) ձեռնարկության կամ հիմնարկության ընթացիկ կամ հաշվարկային հաշվի համարը, ե) ձեռնարկության կամ հիմնարկության հասցեն, զ) փոխառության հաշվարկման համար պատասխանատու աշխատակցի ազգանունը և հեռախոսի համարը:

Ստացված տեղեկությունների հիման վրա բացվում է № 115 ձևի անձնական հաշիվ՝ յուրաքանչյուր ձեռնարկության, հիմնարկության, կազմակերպության, գյուղական տնայնագործ-արհեստագործական արտելի, մեքենատրակտորին կայանների, տնային վարչությունների, արտելի և այլնի համար: Այդ անձնական հաշիվներով հաշվի յեն առնվում բաժանորդագրության գումարը, փոխառության մուծումների մուտք յեղած գումարները, նաև պարտատոմսերի հաշվարկումները:

4. Գյուղական խորհրդից աշխատավարձ ստացող աշխատողների բաժանորդագրությամբ գյուղական խորհուրդների հետ հաշվարկումներ անելու համար՝ Խնայողական Դրամարկղը բացում է № 115 ձևի անձնական հաշիվներ:

5. Գյուղական խորհրդների աշխատողների, մեքենատրակտորային կայանների գյուղական տնայնագործ-արհեստագործական արտելների և գյուղական վայրերում գտնվող ձեռնարկությունների բանվորների և ծառայողների բաժանորդագրության №

115 ձևի անձնական հաշիվները պետք է պահվեն յուրաքանչյուր գյուղական խորհրդի համար առանձին խմբավորված ձևով։

6. Կոլտնտեսականների և մենատնտես գյուղացիների բաժանորդագրության հաշվարկումներն անում է շրջանային Խնայողական գրամարկղի գործառության մասը՝ գյուղխորհուրդներին կից շրջանային ֆինանսական բաժնի գործակալների միջոցով։

Այդ բաժանորդագրության հաշվարկումները հաշվի յեն առնվում Խնայողական գրամարկղի կողմից՝ № 107 ձևի անձնական հաշվի քարտում (նոր ձև)։

Յեթե շրջանային ֆինանսական բաժնի գործակալը փոխառության հաշվարկումներն անում է գանձման գյուղական խորհուրդների լիազորների հետ, ապա Խնայողական գրամարկղը գործակալի համար բացում է № 107 ձևի անձնական քարտեր՝ ըստ յուրաքանչյուր գյուղական խորհրդի։

№ 107 ձևի անձնական հաշվում հաշվի յեն առնվում՝

ա) բաժանորդագրության գումարը և բաժանորդների քանակը, բ) պարտատոմսերի հանձնումը, գ) փոխառության մուտք յեղած գումարը և դ) շրջանային ֆինանսական բաժնի գործակալին և գյուղական խորհրդի լիազորներին փոխառության աշխատանքների համար վարձատրություն վճարելը։

Կոլտնտեսականների բաժանորդագրության գումարը և այդ բաժանորդագրության մուծումները հաշվի յեն առնվում № 107 ձևի անձնական հաշիվներում առանձին սյունակներով՝ ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության։

Յեթե շրջանային ֆինանսական բաժնի գործակալի հետ հաշվարկումներ ունենալու համար բացված են № 107 ձևի յերկու քարտեր—անձնական հաշիվներ (ըստ գանձման գյուղական խորհուրդների), ապա գործակալին իրացման համար տրված պարտատոմսերի հաշվառումը, նաև փոխառության աշխատանքների համար տրված վարձատրության հաշվառումը Խնայողական գրամարկղը տանում է № 107 ձևի անձնական հաշվի մեկ քարտում։ Այդ դեպքում, քարտի (անձնական հաշվի) վրա նշվում է նաև այդ գործակալի յերկրորդ քարտի (անձնական հաշվի) համարը։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

7. Փոխառության իրացումը հաշվի յե առնվում № 116 ձևի մատյանում, նաև № 115 ձևի անձնական հաշիվներում և № 107 ձևի քարտերում (անձնական հաշիվներում) այն № 16 ձևի հաշվետու տեղեկությունների հիման վրա, վորոնք ներկայացնում են ձեռնարկությունները, հիմնարկությունները և գյուղական խորհուրդները (իրենց աշխատողների բաժանորդագրության համար), նաև № 21 ձևի հաշվետու տեղեկությունների հիման վրա, վորոնք ներկայացնում են գյուղական խորհրդին կից շրջանային ֆինանսական բաժնի գործակալները (գյուղացիների բաժանորդագրության համար)։

8. Խնայողական գրամարկղը պարտավոր է խստիվ հետևել, վորպեսզի № 16 ձևի տեղեկությունները ժամանակին ստացվեն բոլոր ձեռնարկություններից, հիմնարկություններից, գյուղական անասնաբույծ- արհեստագործական արտելներից, մեքենա-տրակտորային կայաններից, գյուղխորհուրդներից, արտելներից, տնային վարչություններից և № 21 ձևի տեղեկությունները՝ շրջանային ֆինանսական բաժնի գործակալներից։

Այդ տեղեկություններով յեկած

բաժանորդագրության գումարը գրանցվում է № 116 ձևի մատյանում և միաժամանակ՝ № 115 ձևի անձնական հաշիվներում և № 107 ձևի քարտերում: № 116 ձևի մատյանում նույնպես գրանցվում են բաժանորդների քանակի մասին յեղած տվյալները:

9. № 116 ձևի մատյանի 3-րդ սյունակում հաշվի չի առնվում այն պարտատոմսերի գումարը, վորպիսիք խնայողական դրամարկղն անմիջականորեն վաճառել է կանխիկ հաշվով: 4-րդ սյունակում գրանցվում է կոլեկտիվների բաժանորդագրության սկզբնական գումարը, իսկ փոխառության հաշվարկումների ժամանակաշրջանում՝ այդ սյունակում լրացուցիչ կերպով նշվում է նոր ընդունված բաժանորդագրության գումարը: 5-րդ սյունակում գրվում է բաժանորդագրությունը պակասելու գումարը: 6-րդ սյունակում նշվում է այն պարտատոմսերի ընդհանուր գումարը, վորպիսիք իրացվել են մաս-մաս վճարումների բաժանորդագրությամբ և կանխիկ հաշվով, աճող հանրագումարով (բոլոր կոլեկտիվների համար) փոխառության իրացման սկզբից: 7—10 սյունակներում տրվում է այն գումարների բաշխումը, վորպիսիք գրանցված են 3,4 և 5 սյունակներում՝ ըստ բաժանորդների առանձին խմբերի:

Օրինակ՝ հաշվետու ժամանակաշրջանում՝ բանվորների և ծառայողների մի կոլեկտիվի 10 բաժանորդների նոր ընդունված բաժանորդագրության գումարը կազմում է 3000 ռուբլի, իսկ բաժանորդագրության պակասումը կոլեկտիվից 2 բաժանորդների հեռանալու կապակցությամբ՝ արտահայտվում է 500 ռուբլի գումարով: Այդ դեպքում՝ 4-րդ սյունակում նշվում է 3000 ռ., 5-րդ սյունակում— 500 ռ., 6-րդ սյունակի հանրագումարը մեծանում է 2500 ռուբլով, 7-րդ սյունակում գրվում է բաժանորդների քանակի աճը—8 մարդ և նշվում է բաժանորդագրությունը մեծանալու զուտ գումարը, այսինքն 2500 ռուբլի:

Յեթե հաշվետու ժամանակաշրջանում կոլեկտիվում առաջացել է բաժանորդագրության նվազում և բաժանորդների քանակը պակասել է, ապա այդ տվյալները կարմիր թանաքով և մինուս նշանով ցույց է տրվում № 116 ձևի մատյանի 7—10 սյունակներում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գյուղական տնայնագործ— արհեստագործական արտելների անդամների բաժանորդագրությունը մտցվում է կոոպեր-տեսականների բաժանորդագրության մեջ:

10. Փոխառության հաշվետվությունը ներկայացնելու համար սահմանված ժամկետներում № 116 ձևի մատյանում դուրս են բերվում հաշվետու ժամանակաշրջանի հանրագումարները և աճող հանրագումարները՝ փոխառության իրացման սկզբից: 7—10 սյունակներում աճող հանրագումարները դուրս բերելու ժամանակ՝ կարմիր թանաքով ցույց տրված գումարները հանվում են հանրագումարներից:

7—10 սյունակների բաժանորդագրության ընդհանուր գումարը պետք է հավասար լինի № 116 ձևի մատյանի 6-րդ սյունակի աճող հանրագումարին:

11. Խնայողական դրամարկղի կողմից կանխիկ հաշվով անմիջականորեն վաճառված պարտատոմսերի անվանական արժեքը հաշվի չի առնվում № 116 ձևի մատյանում՝ № 53 ձևի օրդերների հիման վրա: № 116 ձևի մատյանում յուրաքանչյուր գրանցման դիմաց նշվում է՝ «Վաճառված է խնայողական դրամարկղի կողմից»: Խնայողական դրամարկղի կողմից վաճառված պարտատոմսերի ընդհանուր գումարը (№ 53 ձևի օրդերներով) ցույց է տրվում գործառ-

նության ոլագրի № 25-ա ձևի հավելվածի «ԽՍՀՄ ՑԺԿ-ի դեպո» հավաքածի՝ «Ցերրորդ հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառություն» սյունակում «Այլ ծախսեր» տողում:

# ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔ ՅԵՂՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

(Կենտրոնական, շրջանային և 1-ին կարգի խնայողական դրամարկղների գործառնության մասերում):

12. Փոխառության մուտք յեղող գումարները հաշվի յեն առնվում № 128 ձևի մատյանում և № 115 և 107 ձևերի անձնական հաշիվներում: Մուտք յեղող գումարները գրանցվում են մատյանում և անձնական հաշիվներում՝ մուծումները կանխիկ դրամով ընդունելու օրդերներով կամ խնայդրամարկղում յեղած ընթացիկ հաշիվներից մուծումները դուրս գրելու չեկերով, նաև կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահության տեղեկանքներով այն մուծումների մասին, փոխխոխիք մուտք են յեղել Պետբանկի միջոցով անկանխիկ հաշվարկումների կարգով:

13. № 128 ձևի մատյանը միասնական և փոխառության բացման ամբողջ ժամանակաշրջանի համար:

Յուրաքանչյուր մուծումը մատյանի համապատասխան սյունակում (4,5, 6 կամ 7) գրանցելուց հետո՝ խնայողական դրամարկղի վերահսկիչը մատյանի 8-րդ սյունակում («ընդամենը մուտք է յեղել») գրում է մուտք յեղած մուծումների աճող հանրագումարները՝ փոխառության բացման սկզբից:

14. Պետբանկում յեղած ձեռնարկությունների, հիմնարկությունների և գյուղական խորհուրդների ընթացիկ հաշիվներից դուրս գրված մուծումների գումարով՝ խնայողական դրամարկղի վերահսկիչը հաշվապահությունից ստանում է յերկու օրինակ № 118 ձևի տեղեկանքներ: № 118 ձևի տեղեկանքի համաձայն, մուտք յեղած գումարները գրանցվում են № 128 ձևի մատյանում՝ առանց օրդերներ կազմելու և գործառնության օրագրում գրանցելու:

15. Խնայողական դրամարկղը փոխառության մուծումները կանխիկ դրամով ձեռնարկություններից, հիմնարկություններից, գյուղական խորհուրդներից կամ շրջանային ֆինանսական բաժնի գործակալներից ընդունելու ժամանակ՝ մուծումների գումարով դուրս է գրում № 53 ձևի օրդեր: Ձեռնարկությանը, հիմնարկությանը, գյուղական խորհրդին կամ շրջանային ֆինանսական բաժնի գործակալին տրվում է № 31 ձևի անդորրագիր:

16. Այն դեպքում, յերբ ձեռնարկությունը, հիմնարկությունը կամ գյուղական խորհուրդը փոխառության մուծումները վճարում է խնայողական դրամարկղում յեղած իր ընթացիկ հաշվից, խնայողական դրամարկղի վերահսկիչը, ներկայացրած չեկի հիման վրա, կազմում է № 55 ձևի հաշվային օրդեր՝ նշելով այդ օրդերում ձեռնարկության, հիմնարկության կամ գյուղական խորհրդի անվանումը և նրա անձնական հաշվի համարը (№ 115 ձեվ):

Առանց ձեռնարկության, հիմնարկության կամ գյուղական խորհրդի չեկի՝ ընթացիկ հաշիվներից փոխառության մուծումները դուրս գրելը չի թույլատրվում:

17. Այն դեպքում, յերբ շրջանային ֆինանսական բաժնի գործակալ-

ները փոխառության մուծումները հանձնում են գյուղական խնայողական դրամարկղին, այդ մուծումները փոխադրվում են (ձև № 10 ա) շրջանային խնայողական դրամարկղը:

Ֆինանսական բաժնի գործակալները պարտավոր են փոխառության մուծումների հանձնումը (կանխիկ դրամով, փոստով կամ գյուղական խնայողական դրամարկղի միջոցով) կատարել № 54 ձևի ուղեկցող անդեկագրով:

18. Պարտատոմսերն անմիջականորեն խնայողական դրամարկղի կողմից կանխիկ հաշվով վաճառելուց ստացված գումարները № 53 ձևի օրդերների հիման վրա՝ գրանցվում են № 128 ձևի մատյանում: Յուրաքանչյուր նման գրանցման դիմաց նշվում է՝ «Վաճառված է խնայողական դրամարկղի կողմից»:

19. Մուտք յեղած գումարները բացի № 128 ձևի մատյանում և № 115 և 107 ձևերի անձնական հաշիվներում գրանցելուց՝ № 53 և № 55 ձևերի յուրաքանչյուր օրդերի գումարը պետք է գրանցվի № 24 ձևի գործառնության օրագրում:

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՍՏԱՑՎԵԼՈՒ ՎՐԱ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼԸ

20. Փոխառության մուծումները հիմնարկություններից և ձեռնարկություններից ժամանակին ստացվելու վրա հսկողություն ունենալու համար, խնայողական դրամարկղը № 115 ձևի անձնական հաշիվներում նշում է, թե ձեռնարկությունը կամ հիմնարկությունը ամսվա վոր օրերին է վճարելու բաժանորդագրության մուծումները, հարմարեցրած՝ աշխատավարձը վճարելու ժամկետներին:

Մեծ քանակությամբ ձեռնարկություններ և հիմնարկություններ սպասարկող խնայողական դրամարկղները կազմում են ձեռնարկությունների և հիմնարկությունների ցուցակը՝ ըստ մուծումների վճարման ժամկետների: Ցուցակները կազմվում են տետրակում, վորի մեջ առանձին էջում, վորն առանձնացվում է ամսվա յուրաքանչյուր օրվա համար, թվարկվում են համապատասխան ձեռնարկությունների և հիմնարկությունների անձնական հաշիվների համարները:

21. Ամեն օր, գործառնության օրվա վերջում ստուգվում է այն բոլոր անձնական հաշիվների հաշվարկումների գրությունը, վորոնց մուծումների վճարման ժամկետը լրացել է:

Հաշվարկումներն ստուգելիս վորոշվում է, թե առ ստուգման օրը՝ մուծումների ինչպիսի գումար պետք է մուտք լինի ձեռնարկությունից կամ հիմնարկությունից և այդ գումարը համեմատվում է փաստորեն մուտք յեղած մուծումների ընդհանուր գումարի հետ:

Ձեռնարկությունից կամ հիմնարկությունից հասնող հերթական մուծման գումարը վորոշվում է հետևյալ կարգով՝

ա) առաջին մուծման չափը վորոշվում է հայտարարված բաժանորդագրության գումարը վճարման ժամանակաշրջանի քանակի վրա բաժանելու միջոցով՝ մինչև փոխառության մաս-մաս վճարումների վերջը: Հետևապես, յեթե ձեռնարկությունը կամ հիմնարկությունը բաժանորդագրության հայտը ներկայացրել են փոխառության թողարկման սկզբնական շրջանում և մինչև բաժանորդագրության մաս-մաս վճարումների վերջը մնում է լրիվ 10 ամիս,— հայտարարված բաժանորդագրության գումարը բաժանվում է 20-ի վրա: Ստացված արդյունքը կկազմի առաջին մուծման հասնող չափը:

բ) Յուրաքանչյուր հետևյալ մուծման չափը վորոշելու համար նկատի յե առնվում բաժանորդագրության գումարի փոփոխումը:

Յեթե հաշվետու կես ամսում բաժանորդագրությունն ավելացել է, ապա բաժանորդագրության աճի գումարը բաժանվում է այն մուծումների քանակի վրա, վորոնք մնում են մինչև մաս-մաս վճարումների ժամանակաշրջանի վերջը: Ստացված արդյունքն ավելացվում է նախընթաց հերթական մուծման նախկինում հաշված գումարին:

Բաժանորդագրությունը պակասելու դեպքում՝ պակասման գումարը նույնպես բաժանվում է մնացած մուծումների քանակի վրա: Ստացված արդյունքը հանվում է նախընթաց մուծման նախկինում հաշված գումարից:

Այդ կարգով վորոշվող նոր հերթական մուծման չափը գրվում է կոլեկտիվի անձնական հաշվում:

## ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼԸ

22. Խնայողական դրամարկղը պարտավոր է սահմանված ժամկետներին ստանալ ձեռնարկություններից, հիմնարկություններից, գյուղական խորհուրդներից, շրջանային ֆինանսական բաժնի գործակալներից, արտելներից և տնային վարչություններից № 156 ձևի տեղեկություններ՝ բաժանորդագրությունն ըստ կուպյուրների բաշխելու մասին:

Ստացված № 156 ձևի տեղեկությունները խնայողական դրամարկղը համեմատում է № 115 ձևի և № 107 ձևի անձնական հաշիվների բաժանորդագրության ընդհանուր գումարի տվյալների հետ և՝այդ տեղեկությունները գրանցում է հատուկ տեղեկագրում, № 156 ձևին համեմատ: Այդ տեղեկագրով է վորոշվում, թե խնայողական դրամարկղը պարտատոմսերի ինչպիսի կուպյուրների պահանջ ունի:

1938 թ. օգոստոսի 3-ին և 1939 թ. փետրվարի 3-ին Խնայողական Դրամարկղը հայտնում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությանը՝ բաժանորդագրության ընդհանուր գումարի ըստ կուպյուրների բաշխումը փոխատվության յուրաքանչյուր մասի համար :

Այդ տեղեկությունների հիման վրա՝ կենտրոնական կամ շրջանային Խնայողական դրամարկղը վորոշում է յուրաքանչյուր մասի և արժողության պարտատոմսերի պահանջն ըստ շրջանի կամ քաղաքի՝ ամբողջությամբ վերցրած:

Այդ տեղեկությունների լրիվության և ճշտության պատասխանատվությունը դրվում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչի և գլխավոր հաշվապահի վրա:

23. Խնայողական դրամարկղը պարտատոմսերը տալիս է ձեռնարկության, հիմնարկության, գյուղական խորհրդի (իր աշխատակիցների բաժանորդագրությամբ) արտելի կամ տնային վարչության ներկայացուցչին՝ միայն № 140 ձևի հավատարմագրի առկայության դեպքում:

Հավատարմագրով արված պարտատոմսերի գումարի մասին Խնայողական դրամարկղը № 140— ա ձևով ծանուցագիր է ուղարկում ձեռնարկության, հիմնարկության, գյուղական խորհրդին, արտելին

կամ տնային վարչության։

Հավատարմագրով տրվող պարտատոմսերի գումարով Խնայողական Դրամարկղի վերահսկիչը կազմում է № 53 ձևի ելքի օրդեր` արժեքները հանձնելու համար և օրդերի հակադիր յերեսում ստորագրել է տալիս պարտատոմսերն ստանալու համար։

Տրված պարտատոմսերի հավատարմագրերը մարվում են մակագրելով` «Պարտատոմսերը․ . . . . ռուբլի գումարով տրված են . . . . 193. . թ.», և վավերացվում է Խնայողական Դրամարկղի վերահսկիչի և գանձապահի ստորագրություններով։ Մարված հավատարմագիրը կցվում է № 53 ձևի օրդերին։

24. Կոլտնտեսականների և մենատնտես գյուղացիների բաժանորդագրության գծով գյուղական խորհուրդների լիազորների հետ հաշվարկումներ անելու համար շրջանային ֆինանսական բաժնի գործակալները պարտատոմսերով մատակարարվում են անմիջականորեն շրջանային Խնայողական Դրամարկղի կողմից։

Մինչ պարտատոմսերի հանձնումը` շրջանային դրամարկղը պարտավոր է Ջրջանային ֆինանսական բաժնից ստանալ նրա գործակալների ցուցակը, վորի մեջ պետք է նշված լինի գործակալի ազգանունը, անունը և հայրանունը, նրա հասցեն և գործակալի կողմից սպասարկվող գյուղական խորհուրդների անվանումները։
է շրջանային ֆինանսական բաժնից

Հետագայում` շրջանային Խնայողական Դրամարկղը պետք է ջրջանային ֆինանսական բաժնից տեղեկություններ ստանա շրջֆինբաժնի գործակալների կազմի մեջ փոփոխություններ լինելու մասին (փոխադրելու, արձակելու և այլնի ժամանակ)։ Խնայողական Դրամարկղը պարտատոմսեր է տալիս միայն այն գործակալներին, վորոնք նշված են շրջանային ֆինանսական բաժնից ստացված ցուցակում։

Տրվող պարտատոմսերի գումարով վերահսկիչը կազմում է № 53 ձևի օրդեր` և շրջանային ֆինանսական բաժնի գործակալից ստորագրություն է վերցնում պարտատոմսերը ստանալու համար։

25. Ձեռնարկություններին, հիմնարկություններին, գյուղական խորհուրդներին (իրենց աշխատողների բաժանորդագրությամբ) և շրջանային ֆինանսական բաժնի գործակալներին (գյուղացիների բաժանորդագրությամբ) տրված պարտատոմսերը, յուրաքանչյուր օրդերով գրանցվում են № 24 ձևի գործառնության օրագրի «Արժեքների ելք» սյունակում նաև № 115 և № 107 ձևերի անձնական հաշիվներում։

Օրվա վերջին` տրված պարտատոմսերի ընդհանուր գումարը ելք է դուրս գրվում գործառնության օրագրի № 25-ա հաշվեկշռի «ԽՍՀՄ ՖԺԿ-ի Դեպո» բաժնում «Յերրորդ հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառության» սյունակում ,«Այլ ելք» տողում ։Բացի այդ` այն պարտատոմսերի ընդհանուր գումարը, վորպիսիք ԽՍՀՄ ՖԺԿ-ի Դեպոյից տրվել են ձեռնարկություններին, հիմնարկություններին և գյուղական խորհուրդներին (իրենց աշխատողների բաժանորդագրությամբ) վերահսկիչը նշում է № 25-ա ձևի հավելվածի X հատվածում, իսկ շրջանային ֆինանսական բաժնի գործակալներին տրված պարտատոմսերի գումարը—XI հատվածում («Տրված է» տողում)։

26. Փոխառության բաժանորդագրության մաս-մաս վճարումներն ավարտելուց մեկ-յերկու տասնօրյակ առաջ` Խնայողական Դրամարկղը պարտավոր է յուրաքանչյուր ձեռնարկությունից, հիմնարկությունից և կազմակերպությունից ստանալ հայտ` բաժանորդներին բաժանելու համար պահանջվող պար-

տատոմսերի գումարի մասին ըստ կուպյուրների, հաշվի առնելով այն պարտատոմսերի շահումից յեղած մնացորդը, վորպիսիք ստացվել են հետագող բաժանորդների հետ հաշվարկումներ անելու համար։

27. Շրջանային ֆինանսական բաժնի գործակալներին № 52 ձևի հաշվարկային անդորրագրերով մատակարարում է Խնայողական Դրամարկղը։ № 52 ձևի հաշվարկային անդորրագրերի գրքույկները տրվում (ուղարկվում) են շրջանային ֆինանսական բաժնի գործակալներին՝ կից գրությամբ, վորի մեջ նշվում են տրված (ուղարկված) գրքույկների քանակը և հաշվարկային անդորրագրերի համարները (№. . ից) մինչև №. . .—ը)։ Յուրաքանչյուր գործակալին տրված հաշվարկային անդորրագրերի կից գրության պատճենները խմբավորվում և պահվում են խնայողական դրամարկղում առանձին գործում։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐՆ ԱՎԱՐՏԵԼԸ

28. Անձնական հաշիվների դրությամ վրա հսկողություն ունենալու և փոխառության հաշվարկումներն ստուգելու համար, Խնայողական Դրամարկղը, 2 օրվա ժամկետում յուրաքանչյուր ամիսը վերջանալուց հետո՝ պարտավոր է կազմել հանրագումարային քաղվածքներ (ամփոփագրեր) № 115 ձևի անձնական հաշիվներից՝ ըստ բաժանորդների յուրաքանչյուր խմբի և առանձին քաղվածք՝ ըստ շրջանային-ֆինանսական բաժնի գործակալների քարտեր—անձնական հաշիվների (№ 107 ձևի)։

Անձնական հաշիվների քաղվածքում նշվում են՝ ա) անձնական հաշվի №-ը (№ 107 ձևի անձնական հաշիվներինը— շրջֆինբաժնի գործակալի ազգանունը և գյուղական խորհրդի անվանումը), բ) փոխառության իրացման սկզբից տրված պարտատոմսերի ընդհանուր գումարը, գ) վերադարձրած պարտատոմսերի գումարը, դ) փոխառության իրացման սկզբից մուտք յեղած մուծումների գումարը։

Անձնական հաշիվների բոլոր քաղվածքների (ամփոփագրերի) ընդհանուր հանրագումարն ըստ տրված պարտատոմսերի գումարի (հանած վերադարձվածները), պետք է հավասար լինի այն պարտատոմսերի մնացորդին, վորպիսիք մնում են ձեռնարկությունների, հիմնարկությունների, գյուղական խորհուրդների և շրջանային ֆինանսական բաժնի գործակալների մոտ՝ ըստ գործառնության օրագրի № 25-ա հավելվածի— X և XI հոդվածների։ Անձնական հաշիվների քաղվածքների մուտք յեղած մուծումների ընդհանուր հանրագումարն ավելացրած այն գումարը, վորը մուտք է յեղել խնայողական դրամարկղների կողմից անմիջականորեն կանխիկ հաշվով վճարված պարտատոմսերի համար, պետք է հավասար լինի մուտք յեղած գումարների ընդհանուր հանրագումարին՝ ըստ № 128 ձևի մատյանի տվյալների։ Խնայողական դրամարկղի վարիչի և վերահսկիչի կողմից ստորագրված անձնական

հաշիվների քաղվածքները ներկայացվում են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղում հաշվապահությանը՝ այն պարտատոմսերի գումարի տեղեկանքի հետ, որոնք փոխանցված են անմիջականորեն խնայողական դրամարկղի կողմից կանխիկ հաշվով։

29. Ձեռնարկության, հիմնարկության, գյուղական խորհրդի (իրենց աշխատողների բաժանորդագրությամբ) կամ շրջանային ֆինանսական բաժնի գործակալի կողմից փոխառության վերջին մուծումը մտցնելուց հետո, № 115 ձևի և № 107 ձևի յուրաքանչյուր անձնական հաշվի պարտատոմսերի մնացորդը պետք է հավասար լինի այդ անձնական հաշիվների մուտք գրված մուծումների ընդհանուր գումարին։

30. Եթե փոխառության հաշվարկումներն ավարտելու ժամանակ կպարզվի, որ ձեռնարկությունը, հիմնարկությունը, գյուղական խորհուրդը կամ շրջանային ֆինանսական բաժնի գործակալը ստացել են պարտատոմսերի ավելորդ գումար (փոխառության մուծումների դիմաց), ապա խնայողական դրամարկղը պարտավոր է անմիջապես հետ պահանջել այդ պարտատոմսերը։

Վերադարձված պարտատոմսերի համար խնայողական դրամարկղի վերահսկիչը կազմում է № 54 ձևի մուտքի օրդեր։ Յուրաքանչյուր օրդերի գումարը գրանցվում է գործառնության օրագրում— «Արժեքների մուտք» սյունակում և № 115 և № 107 ձևերի անձնական հաշիվներում։ Պարտատոմսերն ընդունելու համար խնայողական դրամարկղը տալիս է ձեռնարկությանը, հիմնարկությանը, գյուղական խորհրդին կամ շրջանային ֆինանսական բաժնի գործակալին № 31 ձևի անդորրագիր։ Ընդունված պարտատոմսերի ընդհանուր գումարն օրվա վերջում մուտք է արվում գործառնության օրագրի № 25-ա հավելվածի «ԽՍՀՄ ՖԿԺ-ի Դեպո» հատվածում, «Երրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառություն» սյունակում, «Այլ մուտք» տողում։

Ձեռնարկությունների, հիմնարկությունների և գյուղական խորհուրդների կողմից (գյուղխորհուրդների աշխատողների բաժանորդագրությամբ) վերադարձված պարտատոմսերի գումարը միաժամանակ ցույց է տրվում № 25-ա ձևի հավելվածի X հատվածում, իսկ շրջանային ֆինանսական բաժնի գործակալների կողմից վերադարձված պարտատոմսերի գումարը— XI հատվածում, «վերադարձված է» տողում։

31. Փոխառության հաշվարկումներն ավարտելուց հետո, խնայողական դրամարկղները պարտավոր են կազմելու հանրագումարային քաղվածքներ՝ (ամփոփագրեր) № 115 և № 107 ձևերի անձնական հաշիվներից և այդ քաղվածքները համեմատել № 116 ձևի և № 128 մատյանների տվյալների հետ։

32. Ամփոփագրերը խնայողական դրամարկղները պետք է կազմեն ըստ դրության առ 1-ն հուլիսի 1939 թ. այսինքն՝ ձեռնարկություններից, հիմնարկություններից և շրջանային ֆինանսական բաժնի գործակալներից փոխառության հանրագումարային հաշվետվություն ստանալուց հետո, որը նախատեսված է ԽՍՀՄ Ֆինժողկոմատի՝ «Երրորդ հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառության» իրացման պայմանների և կարգի մասին յեղած № 332/152 և № 333—153 հրահանգներով։

33. № 115 ձևի անձնական հաշիվների հանրագումարների քաղվածքները կազմվում են առանձին՝

ա) Ձեռնարկությունների, հիմնարկությունների բանվորների և ծառայողների բաժանորդագրության

համար և գյուղական խորհուրդների աշխատողների բաժանորդագրության համար:

բ) Քաղաքի այլ բնակչության բաժանորդագրության համար:

Քաղվածքները կազմվում են հետևյալ ձևով՝

| Անձնական հաշվի №-ը | Մուտք են յեղել մուծումներ | Պարտատոմսերի շարժումը | | | Տեղեկություններ պարտատոմս. հանձնելու մասին | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տրված են պարտատոմսեր իրացման համար | Վերադարձված են չիրացված պարտատոմսեր (չվճարված | Ենթակա յեն վճարման (մնացորդ) | Բաժանված են պարտատոմսեր բաժանորդներին | Հանձնված են պարտատոմսեր խնայդրամարկղին՝ անվանական ցուցակներով (վճարված են բայց չեն հանձնված) | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |

1-ից մինչև 5 սյունակների տեղեկությունները պետք է լրացված լինեն № 115 ձևի անձնական հաշիվների ավյալների հիման վրա, իսկ 6 և 7 սյունակներինը— ձեռնարկությունների և հիմնարկությունների հաշվետվություններով:

Բաժանորդագրության մուծումների գումարը (սյունակ 2) պետք է հավասար լինի վճարման յենթակա պարտատոմսերի գումարին (սյունակ 5): Այդ գումարների հավասարությունը կարող է խախտվել, յեթե կազմակերպությունները չեն վերադարձրել չիրացված պարտատոմսերը կամ մուծել են փոխառության ավելորդ գումարներ (մանր մուծումներ): Բացվածքում (ամփոփագրում) անհրաժեշտ բացատրություններ են տրվում այդ տարբերությունների մասին (սյունակ 8):

Այդպիսի դեպքերում՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը պարտավոր է միջոցներ ձեռնարկել հաշվարկումները կազմակերպությունների հետ լրիվ չափով ավարտելու համար մինչև փոխառության իրացման հաշվետվության ներկայացնելը:

34. № 107 ձևի անձնական հաշիվների հանրագումարների քաղվածքները (ըստ շրջանային ֆինանսական բաժնի գործակալների հետ յեղած հաշվարկումների) պետք է կազմված լինի հետևյալ ձևով՝

| Շրջքննրաժնի գործակալի ազգանունը | Պարտատոմսերի շարժումը | | | Մուտք են յեղել մուծումներ | | Ընդամենը մուտ է յեղել | Տեղեկություններ պարտատոմսերը հանձնելու մասին | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Տրվում են պարտատոմսեր | Վերադարձված են պարտատոմսեր | Ընդամենը տրված են՝ հանած վերադարձվածները | Կոլտնտեսականներից | Մենատնտեսներից | | Հանձնված են պարտատոմսեր բաժանորդներին | Վերադարձված են պարտատոմսեր խնայդրամարկղին անվանական ցուցակներով (վճարված, բայց չհանձնված) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |

№ 115 և № 107 ձևերի անձնական հաշիվների բոլոր քաղվածքների (ամփոփագրերի)՝ ընդհանուր հանրագումարն ըստ մուտք յեղած մուծումների գումարի՝ պետք է հավասար լինի № 128 ձևի մատյանի մուտք յեղած գումարին (8 սյունյակի հանրագումարը):

Սահմանված հավասարությունը կարող է խախտվել միայն այն դեպքերում, յերբ խնայողական դրամարկղը պարտատոմսերի վաճառումը կանխիկ հաշվով կատարել է անմիջականորեն: Նման վաճառքի գումարով № 128 ձևի մատյանի հանրագումարն ավելի կլինի ամփոփագրի համապատասխան հանրագումարից: Այդպիսի տարբերությունների գումարները պետք է հաստատված լինեն խնայողական դրամարկղի կողմից անմիջականորեն կանխիկ հաշվով վաճառված պարտատոմսերի տեղեկանքով:

35. № 128 ձևի մատյանների հետ համեմատած քաղվածքների (ամփոփագրերի) հիման վրա՝ № 115 և № 107 ձևերի անձնական հաշիվները փակվում են: Սակայն, պարտատոմսերի այն մնացորդները, վորոնք մնում են ձեռնարկությունների, հիմնարկությունների, գյուղական խորհուրդների և շրջանային ֆինանսական բաժինների գործակալների մոտ, № 25-ա ձևի հավելվածի X և XI հատվածներով խնայողական դրամարկղները չեն դուրս գրում մինչև վոր կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունից գրավոր թույլտվություն չստացվի վճարված պարտատոմսերը № 25-ա ձևի հավելվածով դուրս գրելու համար:

36. Բաժանորդներին չհանձնված պարտատոմսերը ձեռնարկությունները, հիմնարկությունները, գյուղական խորհուրդները և շրջանային ֆինանսական բաժինների գործակալները հանձնում են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գործառնության մասին՝ պարտատոմսեր չստացած բաժանորդների անվանական ցուցակի հետ միասին: Բաժանորդների ցուցակի վրա պետք է լինի ոժանդակող հանձնաժողովի նշումն այն մասին, վոր ինչպես պարտատոմսերն այդ բաժանորդներին հանձնելու հնարավորություն չի յեղել: Ցուցակում յուրաքանչյուր բաժանորդի ազգանվան դիմաց նշվում է բաժանորդի կողմից լրիվ չափով վճարված պարտատոմսերի արժեքը: Յեթե առանձին բաժանորդներ մուծել են այնպիսի գումարներ, վորպիսիք չեն ծածկում պարտատոմսերի ամենափոքր կուպյուրի արժեքը, ապա ցուցակում բաժանորդի ազգանվան դիմաց մի սյունակում ցույց է տրվում լրիվ չափով վճարված պարտատոմսերի գումարը, իսկ մյուս սյունակում —մուծումների մանր գումարները (որինակ՝ 2 ռուբլի, 4 ռուբլի):

Բաժանորդներին չհանձնված պարտատոմսերն ընդունելու ժամանակ՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գործառնության մասը պետք է ապահովի այն, վոր ձեռնարկությունները, հիմնարկությունները և կազմակերպությունները ներկայացնեն բաժանորդների ճիշտ կազմված անվանական ցուցակներ:

Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գործառնության մասի վերահսկիչն ընդունված պարտատոմսերի համար կազմում է № 54 ձևի մուտքի որդեր, պարտատոմսերի գումարը գրանցելով գործառնության որագրի «Արժեքների մուտք» սյունակում: Որդերին կցվում է պարտատոմսեր չստացած բաժանորդների ցուցակը:

Որվա վերջում՝ խնայողական դրամարկղի կողմից ընդունված բաժանորդներին չհանձնված պարտատոմ-

սերի ընդհանուր գումարը մուտք է արվում գործառնության օրագրի № 25-ա ձևի հավելվածի «ԽՍՀՄ ՑԺԿ-ի Դեպո» հատվածում «Յերրորդ հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառություն» սյունակում «Այլ մուտք» տողում:

37. Բաժանորդներին չհանձնված պարտատոմսերը կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները տալիս են մինչև 1940 թ. հունիսի 1-ը՝ անվանական ցուցակների հիման վրա, նախապես ստուգելով բաժանորդի կողմից ներկայացրած ձեռնարկության, հիմնարկության տեղեկանքը, կամ № 52 ձևի հաշվարկային անդորրագիրը:

Պարտատոմսերը բաժանորդներին հանձնելու ժամանակ վերահսկիչը կազմում է № 53 ձևի յելքի որդեր, վորի հակադիր յերեսին բաժանորդն ստորագրում է պարտատոմսերն ստանալու համար: Որդերին կցվում է ձեռնարկության, հիմնարկության տեղեկանքը, կամ № 52 ձևի հաշվարկային անդորրագիրը:

Տրվող պարտատոմսերի գումարը գրանցվում է գործառնության օրագրում «Արժեքների յելք» սյունակում:

Տրված պարտատոմսերի ընդհանուր գումարն օրվա վերջում յելք է դուրս գրվում գործառնության օրագրի № 25-ա հավելվածի «ԽՍՀՄ ՑԺԿ-ի Դեպո» հատվածում, «Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառություն» սյունակում «Այլ յելք» տողում:

# ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

38. «Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառության» մուտք յեղող գումարները հաշվի յեն առնվում կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղների բալանսում՝ № 20 հաշվով:

Այդ փոխառության մասնանշված հաշվի համար տարվում է առանձին անձնական հաշիվ՝ № 100 ձևի մատյանում:

Ծանոթություն.— Շրջանի բոլոր ձեռնարկություններին, հիմնարկություններին և գյուղական խորհուրդներին անմիջականորեն սպասարկող շրջանային խնայողական դրամարկղներում թույլատրվում է ունենալ միայն № 100 ձևի մատյան հաշվապահությունում, ազատելով գործառնության մասը № 128 մատյան ունենալուց: Այդ դեպքում՝ հաշվապահությունը № 100 ձևի մատյանում գրանցում է յուրաքանչյուր գործառնությունը:

39. Կոլտնտեսականների և մենատնտես գյուղացիների բաժանորդագրության մուծումները (վորպիսիք հանձնում են շրջանային ֆինանսական բաժնի գործակալները) նաև գյուղական խորհուրդների աշխատողների բաժանորդագրության մուծումները, նշվում են № 100 ձևի մատյանում «Գյուղական խորհուրդների միջոցով յեկած իրացումից» սյունակում:

Մուտք յեկած գումարներն ըստ բաժանորդների խմբերի բաշխելու ժամանակ՝ գյուղական խորհուրդների աշխատողների մուծումները ցույց են տրվում № 100 ձևի մատյանի 13-րդ սյունակում («Բանվորներից և ծառայողներից»):

40. Փոխառության ստացված մուծումների ընդհանուր գումարը հաշվապահությունն անց է կացնում № 20 հաշվի պահանջով և հետևյալ հաշիվների պարտքով՝

№ 54 — փոխառության մուծումները կանխիկ դրամով վճարելու ժամանակ:

№ 67— փոխառության մուծումները Պետբանկի միջոցով ստացվելու ժամանակ:

№ 15— փոխառության մուծումները խնայողական դրամարկղներում բացված ընթացիկ հաշիվներից վճարելու ժամանակ:

41. Պետբանկի միջոցով ստացված մուծումների գումարով հաշվապահությունը կազմում է № 118 ձևի տեղեկանք 2 օրինակից, յուրաքանչյուր խնայողական դրամարկղի համար առանձին:

Յուրաքանչյուր № 118 ձևի տեղեկանքի գումարը գրանցվում է № 100 ձևի մատյանում առանձին տողով:

42. № 118 ձևի տեղեկանքի երկու օրինակներն էլ ուղարկվում են համապատասխան առաջին կարգի խնայողական դրամարկղին, կամ հանձնվում են գործառնության մասին՝ տեղեկանքում նշված գումարները № 128 ձևի մատյանում և № 115 ձևի անձնական հաշիվներում գրանցելու համար: Դրանից հետո առաջին կարգի խնայողական դրամարկղի կամ գործառնության մասի կողմից վերադարձրած № 118 ձևի տեղեկանքի օրինակը, հաշվապահությունն անմիջապես համեմատում է № 100 ձևի մատյանում արված իր գրանցումների հետ:

Ծանոթություն.— Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչի և գլխավոր հաշվապահի հայեցողությամբ՝ թույլատրվում է Պետբանկից ստացած փոխառության մուծումների փոխանցման մասին յեկած տեղեկությունները հանձնել գործառնության մասին:

Այդ դեպքերում գործառնության մասի համար № 118 ձևի տեղեկանք չի կազմվում: № 20 և № 67 հաշիվներում գրանցումն արվում է գործառնության օրագիրը գործառնության մասից ստանալուց հետո՝ կցելով նրան հանձնված Պետբանկի տեղեկությունները:

43. Փոխառության իրացման հեռագրական հաշվետվություն ներկայացնելու համար սահմանված ժամկետներին, № 100 ձևի մատյանը յեզրափակվում է և նրանում դուրս են բերվում հանրագումարները— փոխառության իրացման սկզբից: Մատյանի 13–16 սյունակների՝ փոխառության իրացման սկզբից աճող հանրագումարները հիմք են ծառայում փոխառության հեռագրական հաշվետվություն կազմելու համար:

44. Մուտք յեղած գումարներն ըստ բաժանորդների խմբերի բաշխելու ժամանակ՝ № 20 հաշվի պարտքի մուծումների վերադարձի և ուղղիչ շրջանառությունների գումարները կարմիր թանաքով և մինուս նշանով գրանցվում են № 100 ձևի մատյանի 13–16 սյունակներում: Այդ սյունակների աճող հանրագումարները դուրս բերելու ժամանակ՝ կարմիր թանաքով գրված գումարները հանվում են հանրագումարներից:

45. Պարտատոմսերի գնման հետ կապված դեբետային շրջանառությունները (օրինակ պետության յեկամուտն անցնող անտեր պարտատոմսերի արժեքը, տարահպատակ քաղաքացիներից գնված պարտատոմսերի արժեքը (չպետք է մտնեն № 100 ձևի մատյանի 13–16 սյունակներում: Այդ պատճառով՝ 13–16 սյունակների հանրագումարը պետք է գերազանցի «Զուտ մուտքեր» սյունակի հանրագումարին՝ գնված պարտատոմսերի գումարով:

46. Փոխառության գումարները մուտք լինելու ընթացքի վրա հսկողություն ունենալու նպատակով, հաշվապահությունը, բացի տվյալ փոխառության № 100 ձևի ընդհանուր մատյանից, բացում է յուրաքանչյուր առաջին կարգի խնայողա-

կան դրամարկղի և գործառնության մասի համար առանձին անձնական հաշիվները՝ № 100 մատյանի ձևով: Գրանցումներն այդ անձնական հաշիվներում կատարում է հաշվապահությունը, որվա ընդհանուր հանրագումարներով:

47. Ձեռնարկություններին, հիմնարկություններին, գյուղական խորհուրդներին և շրջանային ֆինանսական բաժինների գործակալներին տրվող պարտատոմսերը, նաև նրանց կողմից վերադարձվող չիրացված փոխառության պարտատոմսերը, հաշվապահությունը հաշվի յե առնում «Ար. հաշիվ տրված պետական փոխառությունների պարտատոմսեր» № 208 արտաբալանսային հաշվում:

1938 թ. հուլիսի 1-ից № 208 արտաբալանսային հաշվով տարվում է յերկու յենթահաշիվ՝

Յենթահաշիվ № 1— «Ձեռնարկություններին և հիմնարկություններին» և

Յենթահաշիվ № 2— «Շրջանային ֆինանսական բաժնի գործակալներին»:

№ 1 յենթահաշվով հաշվապահությունը հաշվի յե առնում այն պարտատոմսերը, վորոնք տրվում են ձեռնարկություններին, հիմնարկություններին, գյուղական տնայնագործ- արհեստագործական արտելներին, մեքենատրակտորային կայաններին, գյուղական խորհուրդներին (գյուղական խորհուրդների աշխատողների բաժանորդագրությամբ) տնային վարչություններին և այլն:

№ 2 յենթահաշվով հաշվեպահությունը հաշվի յե առնում միայն այն պարտատոմսերը, վորոնք տրվում են շրջանային ֆինանսական բաժնի գործակալներին՝ կոլտնտեսականներին և մենատնտես- գյուղացիների բաժանորդագրությամբ:

№№ 1 և 2 յենթահաշիվների (№ 208 հաշվի շրջանառությունները նշվում են շրջանառության տեղեկագրերում այդ յենթահաշիվներից յուրաքանչյուրի համար առանձին:

ծանոթություն.— ԽՍՀ Միության Պաշտպանության ամրացման փոխառության պարտատոմսերի մնացորդը, վորը հաշվեգրված է գյուղական խորհուրդների հաշվին, պետք է առաջվա նման հաշվի առնվեն № 206 հաշվով՝ մինչև այդ հաշվարկումների լիակատար լիկվիդացիան:

48. Պարտատոմսերի հաշվառումը № 208 հաշվով, յենթահաշիվ № 1, հաշվապահությունը տանում է հետևյալ կարգով՝

ա) յուրաքանչյուր ձեռնարկության, հիմնարկության, գյուղական խորհրդի, արտելի, տնային վարչության և այլ կազմակերպության համար, հաշվեպահությունը բացում է № 107 ձևի անձնական հաշիվ:

բ) Գյուղական վայրերի բանվորների և ծառայողների բաժանորդագրությամբ յեղած № 107-ա ձևի անձնական հաշիվները, նաև գյուղական տնայնագործ- արհեստագործական արտելների № 107-ա ձևի անձնական հաշիվները պահվում են խմբավորված ձևով, ըստ այն գյուղական խորհուրդների, վորոնց տերիտորիայի վրա յեն գտնվում այդ կոլեկտիվները:

գ) Ձեռնարկություններին, հիմնարկություններին, գյուղական խորհուրդներին, արտելներին, տնային վարչություններին և այլոց տրվող պարտատոմսերը յելք են անցկացվում № 205 հաշվով՝ № 106 ձևի մատյանի փոխառության համապատասխան մասի անձնական հաշվի «Տրված է ձեռնարկություններին և հիմնարկություններին (կոլեկտիվներին)» սյունակում և միաժամանակ մուտք են գրվում № 208 արտաբալանսային հաշվում, յենթահաշիվ № 1, գրանցելով № 107 ձևի անձնական հաշվում:

դ) Ամբողջ ստացված և վերադարձված պարտատոմսերը անցկացվում № 208 արտաբալանսային հաշ-

վի մուտքում՝ № 106 ձևի մասյանի փոխատվության համապատասխան մասի անձնական հաշվի «Վերադարձված են ձեռնարկությունների և հիմնարկությունների (կոլեկտիվների) կողմից» սյունակում և № 208 հաշվի յելքում, յենթահաշիվ № 1, գրանցելով № 107-ա ձևի անձնական հաշիվներում:

49. Շրջանային ֆինանսական բաժնի գործակալներին տրվող պարտատոմսերը, նաև նրանց կողմից վերադարձվող չիրացված պարտատոմսերը հաշվապահությունը հաշվի յե առնում № 208 արտաբալանսային հաշվով, յենթահաշիվ № 2 հետևյալ կարգով՝

ա) շրջանային ֆինանսական բաժնի գործակալներին տրվող պարտատոմսերը, հաշվապահությունը յելք է դուրս գրում № 205 արտաբալանսային հաշվից № 106 ձևի մասյանի փոխատվության համապատասխան մասի անձնական հաշվի «Տրված են կոնտրագենտներին» սյունակում և այդ պարտատոմսերը գրանցում է № 208 հաշվի մուտքում, յենթահաշիվ № 2:

բ) Շրջանային ֆինանսական բաժնի գործակալների կողմից վերադարձվող ավելորդ ստացված պարտատոմսերը, հաշվապահությունն անցկացնում № 205 արտաբալանսային հաշվի մուտքում, գրանցելով № 106 ձևի մասյանի փոխատվության համապատասխան մասի անձնական հաշվի «Վերադարձված են կոնտրագենտներին» սյունակում:

Ընդունված պարտատոմսերի գումարը միաժամանակ անցկացվում № 208 արտաբալանսային հաշվի յելքում, յենթահաշիվ № 2:

գ) № 208 հաշվի, յենթահաշիվ № 2, անալիտիկ հաշվառումը հաշվապահությունը տանում է № 107 ձևի քարտեր-անձնական հաշիվներով (նոր ձև), որը բացվում է շրջանային ֆինանսական բաժնի յուրաքանչյուր գործակալի համար (առանձին անձնական հաշիվ բաց յուրաքանչյուր գյուղական խորհրդի) կոլտնտեսականների և մենատնտես-գյուղացիների բաժանորդագրության հավաքումների համար:

Յեթե շրջանային ֆինանսական բաժնի գործակալի հետ հաշվարկումներ անելու համար բացվել են № 107 ձևի յերկու քարտեր-անձնական հաշիվներ (բաց դանազան գյուղական խորհուրդների), ապա գործակալին իրացման համար տրված պարտատոմսերի հաշվառումը, նաև փոխատվության աշխատանքների համար տրված վարձատրության հաշվառումը տանում է հաշվապահությունը № 107 ձևի անձնական հաշվի քարտերից մեկով:

50. Գրանցումները № 107-ա ձևի և № 107 ձևի անձնական հաշիվներում, հաշվապահությունն անցկացնում խնայողական դրամարկղներից ստացվող հետևյալ որդերների հիման վրա՝ № 53 ձևի որդեր-տրված պարտատոմսերը № 205 հաշվից դուրս գրելու համար (№ 208 հաշվի մուտք) և № 54 ձևի որդեր-վերադարձրած և № 205 հաշվում հաշվեգրված պարտատոմսերի համար (№ 208 հաշվի յելք): Հաշվառման համար ընդունվող № 53 և № 54 ձևերի որդերները, մինչ անձնական հաշիվներում գրանցելը, պետք է ստուգվեն բաց յուրաքանչյուր խնայողական դրամարկղի՝ № 25 ա. ձևի համեմվածի տվյալների հետ X և XI հատվածներով:

51. № 107 ձևի անձնական հաշիվներում, հաշվապահությունը, անկախ պարտատոմսերի շարժումից, հաշվի յե առնում այն գումարները, [illegible] ստացվում են խմճարումն բաժանորդագրության, նաև այն վարձատրությունը, որպիսին վճարվում է շրջանային ֆինանսական բաժնի գործակալներին և լիազորներին՝ փոխատվության աշխատանքների համար: Բաժանորդագրության գումա-

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

րը և բաժանորդների քանակը հաշվապահությունը № 107 ձևի անձնական հաշիվներում հաշվի չի առնում:

52. № 20 հաշվով այն գումարները մուտք գրելու ժամանակ, վորպիսիք ստացվում են փոխառության հաշվարկումներով՝ ձեռնարկություններից, հիմնարկություններից, գյուղական խորհուրդներից և շրջանային ֆինանսական բաժնի գործակալներից, № 208 արտաբալանսային հաշվում վոչ մի գրանցում չի արվում: Միայն փոխառության հաշվարկումները ավարտվելուց հետո, № 107 և 107-ա ձևերի անձնական հաշիվները փակվում են լրիվ վճարված պարտատոմսերի անվանական արժեքը յելք դուրս գրելու միջոցով:

Պարտատոմսերի անվանական արժեքը № 208 արտաբալանսային հաշվից (№ № 1 և 2 յենթահաշիվներով) դուրս է գրվում փոխառության ստացված մուծումների մասին յեղած այն տվյալների հիման վրա, վորոնք համեմատվել են № 115 ձևի անձնահաշիվների քաղվածքների հետ (ձեռնարկությունների, հիմնարկությունների, գյուղական խորհուրդների գծով) և № 107 ձևի անձնական հանում № 205 արտաբալանսային հաշիվների քաղվածքների հետ) շրջֆինբաժնի գործակալների գծով), վորոնք ներկայացվում են հաշվապահությանը՝ խնայողական դրամարկղների կողմից:

53. Յեթե հիմնարկությունը կամ ձեռնարկությունը փոխառության համար մուծել է ավելի, քան գանձվել և մուտք են յեղել մուծումներ բաժանորդներից, ապա ավելորդ մուծված գումարը, խնայողական դրամարկղների և պետվարկի ղեկավար վարչության թույլատվությամբ, կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը վերադարձնում է ձեռնարկությանը կամ հիմնարկությանը՝ այդ գումարը Պետբանկում կամ խնայողական դրամարկղում յեղած կազմակերպության ընթացիկ հաշվին փոխանցելու միջոցով: Վերադարձրած գումարն անցկացվում № 20 հաշվի պարտքով, ինչպես մուծումների վերադարձ: Այդ մասին անպայման նշվում է ձեռնարկությունների և հիմնարկությունների անձնական հաշիվներում:

Յեթե գերավճարում թույլ է տրված փոխառության հաշվառման և հաշվետվության վատ դրվածքի պատճառով ձեռնարկությունում կամ հիմնարկությունում, ապա կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը, գերավճարման մեջ մեղավոր անձանց պատասխանատվության յենթարկելու համար հաղորդում է այդ մասին այն վերադաս կազմակերպությանը, վորին հաշվետու յե այդ ձեռնարկությունը կամ հիմնարկությունը:

54. Շրջանային ֆինանսական բաժնի գործակալներին և գյուղական խորհուրդների լիազորներին փոխառության աշխատանքների համար վճարվող վարձատրության գումարը հաշվապահությունն անցկացնում № 132 հաշվի պարտքով:

Դրամը փոստով փոխադրելու ժամանակ, շրջանային ֆինանսական բաժնի գործակալների կողմից գանձված փոստային ծախսերը, շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը գրանցում է № 129-ր հաշվի պարտքում՝ «Դրամային գումարների առաքումը» սյունակում և № 20 հաշվի պահանջում:

## ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՉԲԱԺԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

55. Բաժանորդների կողմից լրիվ չափով վճարված, բայց նրանց չըհանձնված այն պարտատոմսերի, վորպիսիք հանձնվում են կենտրոնական

կամ շրջանային խնայողական դրամարկղի գործառնության մասին՝ անվանական ցուցակներով, հաշվապահությունը, ցուցակի և №54 ձևի որդերի հիման վրա, մուտք է գրում № 205 հաշվում «Մուտք են յեղել բաժանորդներին չհանձնված պարտատոմսեր» առանձին սյունակում, № 106 ձևի մատյանի փոխառության համապատասխան մասի անձնական հաշվում:

Այն ընդունված պարտատոմսերի համար, վորոնք չեն բաժանվել բաժանորդներին, հաշվապահությունը կազմում է № 55 ձևի հաշվային որդեր՝ ընդունված պարտատոմսերի անվանական արժեքով և անցկացնում № 29 հաշվի՝ «Բաժանորդներին չըբաժանված՝ ԽՍՀՄ ՖԺԿ-ի Դեպոյին հանձնված պարտատոմսեր» պարտքում և № 30 հաշվի՝ «Հաշվարկումներ բաժանորդների հետ՝ ըստ չըհանձնված պարտատոմսերի» պահանջում: № 55 ձևի որդերում և ցուցակներում մանրամասնվում է ձեռնարկության կամ հիմնարկության փոխառության բաժանորդագրության անձնական հաշվի համարը:

Բաժանորդներին տրված պարտատոմսերը (ԽՍՀՄ ՖԺԿ-ի դեպոյում առաջներում ընդունվածների հաշվին), հաշվապահությունը, № 53 ձևի որդերների հիման վրա, յելք է դուրս գրում № 205 հաշվից՝ № 106 ձևի մատյանի անձնական հաշիվների առանձին սյունակով «Տրված է բաժանորդներին չհանձնված առաջներում մուտք գրված պարտատոմսերի հաշվին»:

Բաժանորդներին տրվող պարտատոմսերի գումարով՝ հաշվապահությունը կազմում է № 55 ձևի հաշվային որդեր և անցկացնում № 29 հաշվի պահանջով և № 30 հաշվի պարտքով:

56. № 23 ձևի մատյանում № 29 հաշվով բացվում է առանձին անձնական հաշիվ՝ «Յերրորդ հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառություն» այն պարտատոմսերի հաշվառման համար, վորպիսիք չեն հանձնված բաժանորդներին: № 30 հաշվով № 23 ձևի մատյանում բացվում են անձնական հաշիվներ՝ յուրաքանչյուր ձեռնարկության և հիմնարկության համար:

Գրանցումներն այդ անձնական հաշիվներում արվում են վերևում մանրամասնված հաշվային որդերների հիման վրա: Բացի դրանից՝ հաշվապահությունը № 30 հաշվով տանում է չհանձնված պարտատոմսերի լրացուցիչ հաշվառում այն բաժանորդների ցուցակով, վորոնց չեն հանձնվել պարտատոմսերը: Ցուցակները պետք է կարված լինեն առանձին թղթապանակում: Այդ ցուցակներում նշվում է պարտատոմսերի հանձնումը՝ ցույց տալով № 23 ձևի մատյանի անձնական հաշվով անցկացնելու ժամանակը:

Ցուցակներում նշված գումարների հանրագումարը պետք է հավասար լինի այդ փոխառության անձնական հաշիվների № 30 հաշվի մնացորդին:

№ 29 հաշվի դեբետային շրջանառությունը պետք է համապատասխանի այն չհանձնված պարտատոմսերի գումարին, վորոնք մուտք են յեղել № 205 հաշվով՝ № 106 ձևի մատյանի անձնական հաշիվների՝ «Մուտք են յեղել բաժանորդներին չհանձնված պարտատոմսեր» սյունակում: № 29 հաշվի կրեդիտային շրջանառությունը պետք է հավասար լինի այն պարտատոմսերի գումարին, վորոնք դուրս են գրված № 205 հաշվի յելքով՝ № 106 մատյանի անձնական հաշիվների՝ «Տրված են առաջներում մուտք յեղած, բաժանորդներին չըհանձնված պարտատոմսերի հաշվին» սյունակով:

# ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ (ՎԵՐՋՆԱԿԱՆ) ՅԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼԸ

57. *Փոխառության բոլոր հաշվարկումները ձեռնարկությունների, հիմնարկությունների, գյուղական խորհուրդների և շրջանային ֆինանսական բաժնի գործակալների հետ ավարտելուց հետո, կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը պարտավոր է յենթակա դրամարկղներից պահանջել հանրագումարների (ամփոփագրերի) քաղվածքները № 115 և № 107 ձևերի անձնական հաշիվներից, վորոնք համեմատված են № 128 ձևի մատյանի տվյալների, նաև կազմակերպությունների հաշվետվությունների հետ:*

58. *Խնայողական դրամարկղներից ստացված քաղվածքները (ամփոփագրերը) կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը պետք է մանրազննին ստուգի հաշվապահության անալիտիկ հաշվառման տվյալների հետ (Խնայողական դրամարկղների № 100 ձևի անձնական հաշիվների հետ, № 107 ձևի և № 107 ա ձևի անձնական հաշիվների և № 106 ձևի անձնական հաշիվների հետ), նաև ձեռնարկությունների, հիմնարկությունների, գյուղական խորհուրդների և շրջանային ֆինանսական բաժնի գործակալների տվյալների հետ, ըստ նրանցից ստացված փոխառության իրացման հաշվետվությունների:*

59. *Ստուգված քաղվածքների (ամփոփագրերի) հիման վրա՝ հաշվապահությունն ըստ յուրաքանչյուր խնայողական դրամարկղի կազմում է № 53 ձևի ամփոփ որդերներ՝ № 208 հաշվից, յենթահաշիվ № 1, ձեռնարկությունների, հիմնարկությունների և գյուղական խորհուրդների կողմից վճարված պարտատոմսերը դուրս գրելու համար:*

*№ 107 —ա ձևի անձնական հաշիվներում գրվում է մուտք յեղած մուծումների գումարը և դուրս է գրվում վճարված պարտատոմսերի գումարը: № 107 —ա ձևի անձնական հաշիվները փակելու մասին արված մակագրությունը ստորագրում է գլխավոր հաշվապահը:*

*Այդպիսի կարգով էլ դուրս է գրվում № 208 հաշվից, № 2 յենթահաշվով, կոլտնտեսականների և մենատնտես գյուղացիների կողմից վճարված պարտատոմսերը: Դուրս գրված պարտատոմսերի գումարը, հաշվապահությունը նշում է շրջֆինբաժնի յուրաքանչյուր գործակալի № 107 անձնական հաշիվներում:*

*Յեթե ձեռնարկությունները, հիմնարկությունները, գյուղական խորհուրդները և շրջանային ֆինանսական բաժնի գործակալները լրիվ չափով են կատարել փոխառության հաշվարկումները, ապա վճարված պարտատոմսերը դուրս գրելուց հետո՝ № 107 ա և № 107 ձևերի անձնական հաշիվներում մնացորդ չպետք է լինի:*

60. *Վճարված պարտատոմսերը № 107 ա. և № 107 և ձևերի անձնական հաշիվներով դուրս գրելու հետ միաժամանակ՝ հաշվապահությունը դուրս գրված պարտատոմսերի գումարները հայտնում է համապատասխան խնայողական դրամարկղներին՝ № 25 ա. ձևի հավելվածի X և XI հատվածներում արտացոլելու համար:*

61. *«Յերրորդ հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառության» իրացման մասին յեղած՝ կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների հաշվապահական հաշվետվության կազմի մեջ մտնում են՝*

ա) Իրացված պարտատոմսերի ամփոփ հաշվետվությունը (տես № 3 հավելվածը)։

Փոխառության փաստորեն մուտք չեղած գումարների գումարը 1938 թվի և 1939 թ. համար (8-րդ տողի հանրագումարը) պետք է հավասար լինի 5-րդ տողի հանրագումարին, այսինքն՝ վճարման ենթակա չեղած պարտատոմսերի գումարին։

Մատնանշված հավասարությունը կարող է խախտվել միայն այն դեպքում, երբ առանձին ձեռնարկություններ և հիմնարկություններ հանձնել են խնայողական դրամարկղերին այն մուծումների մնացորդները, որոնք չեն ծածկում պարտատոմսերի ամենափոքր կուպյուրի արժեքը (տես 36-րդ հոդ.)։

Իրացված պարտատոմսերի գումարի և փոխառության մուտք չեղած գումարների միջև չեղած տարբերությունները կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը պետք է պարզաբանի հաշվետվության ուղեկցող նամակում։

Ամփոփ հաշվետվության 4-րդ տողում ցույց է տրվում միայն—«Երրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառության» չիրացված (չվճարված) պարտատոմսերի այն փաստացի մնացորդի գումարը, որը մնում է ձեռնարկությունների, հիմնարկությունների, գյուղական խորհուրդների և շրջանային ֆինանսական բաժնի գործակալների մոտ։ Այդ գումարի մեջ չպետք է մտնեն այն վճարված պարտատոմսերը, որոնք հաշվետվությամբ դուրս են գրվում № 208 հաշվից (№№ 1 և 2 ենթահաշիվներով) 1939 թ. հուլիսին։

Հաշվետվության ուղեկցող նամակում անհրաժեշտ է նշել այն պարտատոմսերի մնացորդը, որը եղել է հունիս ամսվա շրջանառության տեղեկագրում (առ 1-ն հուլիսի 1939 թ.) № 208 հաշվում և այն պարտատոմսերի գումարը, որոնք դուրս է գրվել № 208 հաշվից՝ 1939 թ. հուլիսի 1-ից մինչև հաշվետվությունը կազմելու մոմենտին եղած ժամանակաշրջանում։

բ) № 205 հաշվի պարտատոմսերի մուտք—ելքի հանրագումարների քաղվածքները՝ № 106 ձևի մատյանի առանձնական հաշիվներից (տես № 4 հավելվածը)։

գ) Քաղվածք՝ (ամփոփագիր) ձեռնարկությունների հիմնարկությունների և գյուղական խորհուրդների առանձնական հաշիվներից, շրջանի խնայողական դրամարկղների հանրագումարային տվյալներով, հետևյալ ձևով՝

| Խնայդրամարկղների №№ | № 208 հաշվի մուտք, ենթահաշվի № 1 | № 208 հաշվի ելք (№ 1 ենթահաշվի) | | Հանձնված են չբաժանված (վճարված) պարտատոմսեր՝ անվանական ցուցակներով | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|
| | ընդամենը տրված են պարտատոմսեր | վերադարձված են չիրացված պարտատոմսեր | Դուրս են գրված վճարված պարտատոմսեր | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |

Այդ ամփոփագրի 2,3 և 4 սյունակների տվյալները լրացվում են հաշվապահության կողմից տրված (№ 107—ա ձևի անձնական հաշիվներով) № 115 ձևի անձնական հաշիվների այն քաղվածքների հիման վրա, վորոնք ներկայացնում են հաշվետու խնայողական դրամարկղերը: Խնայողական դրամարկղին հանձնված չվճարված (վճարված) պարտատոմսերի գումարը (սյունակ 5) լրացնում է հաշվապահությունը №30 հաշվի տվյալներով:

3 և4 սյունակների հանրագումարը պետք է հավասար լինի 2 սյունակի հանրագումարին:

գ) № 107 ձևի անձնական հաշիվների ամփոփագիրն ըստ շրջանային ֆինանսական բաժնի գործակալների հետ յեղած հաշվարկումների՝ 34-րդ հոդվածում մատնանշված ձևով:

62. Փոխառության բոլոր հաշվարկումները պետք է ամբողջությամբ ավարտված լինեն մինչև փոխառության իրացման մասին հաշվետվության ներկայացնելը: Չավարտված (բացառիկ դեպքերում) հաշվարկումների համար կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը պարտավոր է հաշվետվության ուղեկցող նամակում մատնանշել, թե ով է պարտք մնում, ինչ գումարի հաշվարկումներ չեն վերջացել, յերբ և ինչ միջոցներ են ձեռք առնվել հաշվարկումներն ավարտելու համար, և թե ինչու խնայողական դրամարկղը չի ապահովել փոխառության պարտքը լուծարքի յենթարկելը՝ սահմանված ժամկետին:

63. Փոխառության իրացման մասին յեղած հաշվետու տեղեկությունները՝ կազմված ըստ դրության առ 1-ն հուլիսի 1939 թ. կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները ներկայացնում են պետաշխնայդրամարկղների և պետվարկի իրենց վարչության՝ 1939 թ. հուլիս ամսվա շրջանառության տեղեկագրի հետ միասին:

## ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԵԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ՊԵՏԱՇԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

64. Պետական աշխատավորական խնայողական դրամարկղների մարզային, յերկրային և ինքնավար ԽՍՀ-ի վարչությունները, խնայողական դրամարկղների համեմատված հաշվետվությունների հիման վրա, պետք է կազմեն ամփոփ հաշվետվություններ: Այդ հաշվետվությունների կազմի մեջ մտնում են՝

1) «Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառության» իրացված պարտատոմսերի ամփոփ-հաշվետվությունը՝ 61-րդ հոդվածում մատնանշված ձևով, կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների համար:

2) № 205 հաշվի պարտատոմսերի մուտք—յելքի հանրագումարների քաղվածքը՝ նույն հոդվածում մատնանշված ձևով:

3) Բացատրական նամակ, վորում տրվում են հաշվետվության անհրաժեշտ պարզաբանումներ՝ հաշվետու տեղեկությունների վորակը, տրված պարտատոմսերի գումարի համեմատումը՝ փոխառությամբ մուտք յեղած դրամների գումարի հետ (ի հաշիվ մանր մուծումների յեղած տարբերության առկայության դեպքում՝ անպայմանորեն նշվում է այդպիսի մուծումների գումարը) և բաժանորդների կողմից չպահանջված պարտատոմսերը բաժանելու համար ձեռք առնված միջոցները:

65. Ամփոփ հաշվետվությունը

վարչությունները կազմում են ընդհանուր հանրագումարներով՝ ըստ յերկրի (մարզի) և ներկայացնում են 1939 թ. հունվարի շրջանառության տեղեկագրի հետ միասին:

Պետաշխխնայդրամարկղների և պետվարկի մարզային (յերկրային, ինքնավար ԽՍՀ) վարչությունները հաշվետվությունն ուղարկում են պետաշխխնայդրամարկղների և պետվարկի միութենական հանրապետության վարչության:

Միութենական հանրապետությունների խնայդրամարկղների վարչությունների ամփոփ հաշվետվությունը ներկայացնում են պետաշխխնայդրամարկղների և պետվարկի գլխավոր վարչությանը:

ՌՍՖՍՀ, ՈՒԽՍՀ, Բելոռուսական ԽՍՀ, Ղազախական ԽՍՀ և Ուզբեկական ԽՍՀ պետաշխխնայդրամարկղների և պետվարկի վարչությունների ամփոփ հաշվետվությունները ներկայացնում են պետաշխխնայդրամարկղների և պետվարկի գլխավոր վարչությանը, մարզային (յերկրային) բաժանումներով:

66. Հաշվետվության համար տեղեկագրերի բլանկներ գլխավոր վարչությունը չի տպագրել տալիս, այլ պետք է խնայողական դրամարկղներն իրենք պատրաստել տան գրամեքենայի վրա՝ վերևում մատնանշված ձևով:

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՈՊԵՐԱՏԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

67. 1-ին կարգի Խնայողական Դրամարկղները և գործառնության մասը փոխառության իրացման № 117 ձևի հաշվետու տեղեկագիրը կազմում են № 116 ձևի մատյանի գրանցումների հիման վրա՝ աճող հանրագումարներով՝ փոխառության իրացման սկզբից:

Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հետ միևնույն տեղում գտնվող 1-ին կարգի խնայողական դրամարկղները, նաև գործառնության մասը № 117 ձևի տեղեկագիրը ներկայացնում են հաշվապահությանն ամեն օր՝ հուլիսի 2-ից մինչև 20-ը յեղած ժամանակամիջոցում, հուլիսի 25-ին և 31-ին, իսկ հետագայում՝ յուրաքանչյուր տասնօրյակում— 10-ին, 20-ին և յուրաքանչյուր ամսվա վերջին օրը:

Շրջանային կենտրոնից դուրս գտնվող 1-ին կարգի խնայողական դրամարկղներն ուղարկում են հաշվապահությանը № 117 ձևի տեղեկագիր ամեն օր հուլիսի 2-ից մինչև 19-ը յեղած ժամանակամիջոցում, հուլիսի 24-ին և 30-ին, իսկ հետագայում՝ յուրաքանչյուր տասնօրյակում ամեն ամսի 9-ին, 19-ին և 29-ին, ու այդ օրերն յեղած դրության:

68. Խնայողական դրամարկղներից ստացված № 117 ձևի հաշվետու տեղեկագրերը հաշվապահությունը ի մի յե գումարում ամփոփ տեղեկագրում ըստ շրջանի՝ (քաղաքի) նույն ձևով:

Ամփոփ տեղեկագրի և № 100 ձևի մատյանի տվյալների հիման վրա՝ կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները կազմում են № 2 ձևի հաշվետու տեղեկագիր (տես № 1 հավելվածը) և հանձնում այդ տեղեկագիրն իրենց վարչության՝ հուլիսի ընթացքում ամեն օր— 2-ից մինչև 20-ը հուլիսի, 25-ին և 31-ին հուլիսի, իսկ հետագայում՝ տասնօրյակներով— 10-ին և 20-ին և յուրաքանչյուր ամսվա վերջին օրը:

№ 2 ձևի հաշվետվությունը 1938 թ. հուլիսի 2-ից մինչև 9-ը և 11-ից մինչև 19-ն ու 25-ին՝ բոլոր կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները տալիս են կրճատ ձևով, յերեք ցուցանիշներով՝

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Ինչ սյունակով ցույց տրվում ամենօրյա հեռագրական հաշվետվության մեջ | № 2 ձևի տասնօրյա հաշվետվության որ սյունակներն են միացվում ամենօրյա հեռագրական հաշվետվության մեջ |
|---|---|---|
| ա) Քաղաքի և գյուղի բանվորների ու ծառայողների, նաև քաղաքի այլ բնակչության բաժանորդագրությունը | 01 | 01 և 02 |
| բ) Կոլտնտեսականների և մենատնտեսգյուղացիների բաժանորդագրությունը | 03 | 03 և 04 |
| գ) Բոլոր խմբերի բաժանորդագրության ընդհանուր գումարը | 05 | 05 |

Հաշվետվությունն առ 10-ը, 20-ը և 31-ը հուլիսի, նաև № 2 ձևի տասնօրյա հաշվետվությունն առ հետագա ամսաթվերը՝ տրվում են ամբողջությամբ, առանց կրճատումների:

Բոլոր կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները № 2 ձևի հաշվետվությունը հուլիսի ընթացքում հեռագրով են տալիս իրենց վարչությանը: 1938 թ. օգոստոսի մեկից հետո՝ № 2 ձևի հաշվետվությունը կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները տալիս են փոստով, եթե փոստի վազքը մինչև վարչություն տևում է մեկ օրի պակաս, իսկ մնացածները— հեռագրով:

69. Պետաշխխնայդրամարկղների և պետվարկի վարչությունները անկախ փոստի վազքը տևող ժամանակից, № 2 ձևի հաշվետվությունն ուղարկում են հեռագրով՝ հետևյալ ժամկետներին.

ա) Ինք. ԽՍՀ, երկրների և մարզերի պետաշխխնայդրամարկղների և պետվարկի վարչությունները— միութենական հանրապետությունների վարչություններին, իսկ միութենական վարչությունները, վորոնք չունեն մարզային բաժանում— պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության՝ ամեն օր՝ հուլիսի 3-ից մինչև 21-ը ժամանակամիջոցում, հուլիսի 26-ին, իսկ հետագայում յուրաքանչյուր ամսի՝ 2-ին, 12-ին և 22-ին:

բ) ՌԽՖՍՀ, ՈՒԽՍՀ, ԲԽՍՀ, Ուզբեկական ԽՍՀ և Ղազախական ԽՍՀ պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Վարչությունները— ամեն օր՝ հուլիսի 3-ից մինչև 21-ը, հուլիսի 27-ին, իսկ հետագայում յուրաքանչյուր ամսի 3-ին, 13-ին և 23-ին:

70. № 2 ձևի հաշվետվության մեջ տեղեկությունները տրվում են հազարավոր ռուբլիներով, դարձնելով 500 և ավելի ռուբլիները մինչև հազար ռուբլի: Փոխառության բաժանորդների քանակի մասին տեղեկություններ (06 և 07 սյունակները) տրվում են միավորներով:

Բոլոր տեղեկությունները փոխառության մասին՝ հաղորդվում են աճող հանրագումարներով՝ փոխառության բացման սկզբից:

Հեռագրում նշվում է հաշվետվու-

թյան ժամանակը։ Սիմվոլները (խորհրդանիշները— ցուցանիշների հերթական համարները) տրվում են իրար-կողքի՝ (կպած) համապատասխան գումարների ձախ կողմից։ Սիմվոլների տեղափոխում կամ հետևողական կարգի փոփոխում չի թույլատրվում։ Այն սիմվոլները, որոնց բովանդակությամբ թվական ցուցանիշներ չկան— բաց են թողնվում հետագրում։

71. ԽՍՀ Միության Պաշտպանության Ամրացման փոխառության հաշվետվությունը տրվում է փոստով՝ ամիսը մեկ անգամ, № 3 ձևով (տես № 2 հավելվածը) ըստ դրության առ 1-ն օգոստոսի, 1-ն սեպտեմբերի և 1-ն հոկտեմբերի 1938 թ.։

72. Առ 1-ն հուլիսի № 2 ձևի հաշվետվության մեջ միանվագ կարգով հաղորդվում են առ 1-ն հունիսի 1938 թ. տեղեկություններ՝ փոխառության բաժնեգրությամբ ընդգրկվելու ենթակա բանվորների և ծառայողների ընդհանուր քանակի մասին (մտցնելով ԲՈՒՀ-երի, տեխնիկումների ուսանողներին), ինչպես և կոլտնտեսականների մասին (մտցնելով գյուղական կոոպերացված տնայնագործներին)։

Միաժամանակ՝ այդ տվյալները, բացի դրանից, ներկայացվում են փոստով՝ մանրամասն կերպով հիմնավորելով այդպիսիք։

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՊԵՐԱՏԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՆ ԸՍՏ ԿՈՒՊՅՈՒՐՆԵՐԻ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

73. 1938 թ. օգոստոսի 3-ին և 1939 թ. փետրվարի 3-ին՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը պարտավոր է ստանալու իրեն ենթակա դրամարկղներից հայտեր՝ կոլեկտիվ բաժնեգրության ընդհանուր գումարն ըստ կուպյուրների բաշխելու մասին, փոխառության յուրաքանչյուր մասի համար առանձին։

Բաժանորդագրության ընդհանուր գումարն ըստ կուպյուրների բաշխելու մասին յեկած առաջին հայտը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը հաղորդում է իր վարչության՝ օգոստոսի 5-ին, հեռագրով։ Հեռագիրն սկսվում է «Կուպյուրա» բառով։ Սիմվոլները (խորհրդանիշները— ցուցանիշների հերթական համարները) տրվում են իրար կողքի-կողքի՝ (կպած) համապատասխան գումարների ձախ կողմից։ Սիմվոլների տեղափոխում կամ հետևողական կարգի փոփոխում չի թույլատրվում։ Յեթե մի քանի սիմվոլներով ցուցանիշներ չկան, ապա հեռագրում այդ սիմվոլները բաց են թողնվում։

Հեռագրի սիմվոլները դրվում են հետևյալ կարգով՝

| Պարտատոմսերը գումարով | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անպայման շահող մաս | | | | | | | տոկոսաբեր մաս | | | | | |
| 500 ական ռուբլի | 200-ական ռուբլի | 100-ական ռուբլի | 50-ական ռուբլի | 25-ական ռուբլի | 10-ական ռուբ. | Ընդամենը գումարով | 500 ական ռուբլի | 200 ական ռուբլի | 100-ական ռուբլի | 0-ական ռուբլի | Ընդամենը գումարով | Ընդամենը |
| 01 | 02 | 01 | 04 | 05 | 06 | 07 | 08 | 09 | 10 | 11 | 12 | 13 |

Պարտատոմսերի գումարն ըստ յուրաքանչյուր սիմվոլի՝ տրվում է հազարավոր ռուբլիներով, ամբողջացնելով 500 և ավելի ռուբլիները մինչև 1000 ռուբլի։

Օրինակ՝ Համաձայն ձեռնարկությունների, հիմնարկությունների և շրջանային ֆինանսական բաժնի գործակալներից ստացված տեղեկությունների՝ պարտատոմսերի գումարն ըստ կուպյուրների՝ շրջանի համար կազմում է՝

| Անպայման շահող մասով | | Տոկոսաբեր մասով | |
|---|---|---|---|
| 500 ռ. | 722500 | 500 ռ. | 20800 |
| 200 ռ. | 1. 375000 | 200 ռ. | 40800 |
| 100 ռ. | 2.093000 | 100 ռ. | 37·100 |
| 50 ռ. | 1·325200 | 25 ռ. | 1200 |
| 25 ռ. | 115.000 | Ընդամենը՝ | 99.400 |
| 10 ռ. | 57.400 | | |
| Ընդամենը՝ | 5.688.100 | յեվ ընդամենը՝ | 5·787,500 |

Այդ դեպքում հեռագիրը կազմվում է՝ «Հասցե կուպյուրա 01723 021375 032093 041325 05115 0657 075688 0820 0941 1037 111 1299 135787 ստորագրություն»։

74․ *Ինք․ ԽՍՀ, յերկրների և մարզերի պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի վարչությունները հեռագրերը տալիս են Միութենական հանրապետությունների պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի վարչություններին, և մարզային բաժանում չունեցող միութենական հանրապետությունների պետաշխխնայդրամարկղների և պետվարկի վարչությունները— Գլխավոր վարչությանը՝ ողոստոսի* 10–*ին, իսկ ՌՍՖՍՀ, ՈՒԽՍՀ, ԲԽՍՀ, Ուզբեկական ԽՍՀ և Ղազախական ԽՍՀ Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի վարչությունները հեռագրերն ուղարկում են գլխավոր վարչությանը՝* 1938 *թ․ ողոստոսի* 12–*ին*։

75․ 1938 *թ․ ողոստոսի* 5–*ին հեռագրերն ուղարկելու հետ միաժամանակ, կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը փոստով հաստատումն է ուղարկում իր վարչությանը՝ բաժանորդագրության պարտատոմսերն ըստ կուպյուրների բաշխելու մասին յեղած տեղեկությունների համար*։

76 *Բաժանորդագրության պարտատոմսերն ըստ կուպյուրների բաշխելու մասին տեղեկություններ կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները յերկրորդ անգամ ուղարկում են իրենց վարչությանը՝ միայն փոստով՝* 1939 *թ․ փետրվարի* 5–*ին*։

*Խնայողական դրամարկղների վարչությունների ոպերատիվ բաժինները կազմում են բոլոր իրենց հաշվետու կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների հայտերի տեղեկագիր – (շրջանային բաժանումներով) և այդ տեղեկագիրը փոստով ուղարկում են անմիջականորեն Գլխավոր վարչությանը՝ և պատճենն իրենց վերադաս վարչությանը՝* 1938 *թ․ ողոստոսի* 12–*ին և* 1939 *թ․ փետրվարի* 12–*ին*։

Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր վարչության պետ՝ *ՍՈԼԻՆ*

Գլխավոր հաշվապահ՝ *ՄԻՏԻՆ*

Ձև № 2

Հավելված № 1

Հաստատված է ԽՍՀՄ Պետպլանին առընթեր ԺՏՀՎ. կողմից՝ № 306 որոշումով

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Երրորդ հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառության իրացման, բնակչության ավանդների և խնայողական դրամարկղների մյուս գործառնությունների գծով։*

| Սիմվոլների №№ | Հեռագրում զետեղվող սիմվոլներով տեղեկությունների բովանդակությունը | Հաշվետվության ներկայացման ժամկետները | Ցուցմունքներ հեռագիրը կազմելու համար |
|---|---|---|---|
| | **ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ** | | |
| 01 | Քաղաքի և գյուղի բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժանորդագրությունը . . . . . . . . . . . | Տրվում է ամեն տասնօրյակում № 2 ձևի կազմում | Շրջանի (քաղաքի) № 11 ձևի ամփոփ հաշվետու տեղեկագրից «Իրացված է բաժանորդագրությամբ մաս-մաս վճարումներով և կանխիկ դրամով» տողով—5 սյունակի տվյալները |
| 02 | Քաղաքի այլ բնակչության կոլեկտիվ բաժանորդագրությունը և վաճառքը կանխիկ հաշվով՝ քաղաքներում . . . . . . . . . . . . . . | » | Նույնը 6 սյունակ |
| 03 | Կոլտնտեսականների և գյուղական կոոպերացված տնայնագործների կոլեկտիվ բաժանորդագրությունը, պարտատոմսերի վաճառումը կոլտնտեսականներին՝ կանխիկ հաշվով . . . . . | » | Նույնը 7 սյունակ |
| 04 | Մենատնտես գյուղացիների բաժանորդագրությունը, պարտատոմսերի վաճառումը մենատնտեսներին՝ կանխիկ հաշվով . . . . . . . . . . . | » | Նույնը 8 սյունակ |
| 05 | Բաժանորդագրության ընդհանուր գումարն ըստ բոլոր խմբերի . . . . | » | 01+02+03+04 սիմվոլների գումարների հանրագումարը |
| | **ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ** | | |
| 06 | Քաղաքի և գյուղի բանվորների և ծառայողների . . . . . . . . . . . | » | Նույնը «փոխառության բաժանորդագրությամբ ընդգրկված աշխատավորների քանակը» տողով—5 սյունակի տվյալները։ |

| Սիմվոլների №№ | Հեռագրում զետեղվող սիմվոլներով տեղեկությունների բովանդակությունը | Հաշվետվությունը ներկայացնելու ժամկետները | Ցուցմունքներ հեռագիրը կազմելու համար |
|---|---|---|---|
| 07 | Կոլտնտեսականների և գյուղական կոոպերացված տնայնագործների . . | Տրվում են ամեն տասնօրյակում № 2 ձևի կազմում | Նույն 7 սյունակ |
| | **ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔ ՅԵՂԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ** | | |
| 08 | Քաղաքի և գյուղի բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժանորդագրությամբ . . . . . . . . . . . . | » | № 100 ձևի մատյանի 13 սյունակի փոխառության անձնական հաշվի աճող հանրագումարներն իրացման սկզբից |
| 09 | Քաղաքի այլ բնակչության կոլեկտիվ բաժանորդագրությամբ և կանխիկ վաճառքով . . . . . . . . . . | » | Նույնը 14 սյունակ |
| 10 | Կոլտնտեսականների և գյուղական կոոպերացված տնայնագործների կոլեկտիվ բաժանորդագրությամբ և կոլտնտեսականներին վաճառված կանխիկ հաշվով | » | № 100 ձևի մատյանի 15 սյունակի փոխառության անձնական հաշվի աճող հանրագումարներն իրացման սկզբից |
| 11 | Մենատնտես-գյուղացիների բաժանորդագրությամբ և մենատնտեսներին վաճառված կանխիկ հաշվով . . | » | Նույնը 16 սյունակ |
| 12 | Ընդամենը մուտք է յեղել փոխառությամբ («08»-ի մինչև «11»-ը ներառյալ սիմվոլների ընդհանուր գումարը) | » | 08+09+10+11 սիմվոլների գումարների հանրագումարը |
| 13 | Բնակչության դրամային ավանդների մնացորդը քաղաքային խնայողական դրամարկղներում . . . . . . . | » | 13 և 14 սիմվոլների տեղեկությունները տրվում են գործառնության օրագրի № 25 ա հավելվածների ավանդների մնացորդները գումարելու միջոցով. |
| 14 | Բնակչության դրամային ավանդների մնացորդը գյուղական խնայողական դրամարկղներում . . . . . . . . | » | |
| 15 | Բնակչության դրամային ավանդների մնացորդը քաղաքային և գյուղական խնայողական դրամարկղներում . . . | » | 13 և 14 սիմվոլների գումարը |
| | Ուղարկում են միայն պետաշխ-խնայդրամարկղների և պետվարկի հանրապետական, յերկրային և մարզային վարչությունները . . . . . . . . | » | Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները չեն լրացնում: |
| 16 | Ավանդատուների քանակը քաղաքային խնայողական դրամարկղներում | 16, 17 և 18 սիմվոլներով տեղեկությունները ուղարկվում են ա- | 16 և 17 սիմվոլների տեղեկությունները տրվում են գործառնության օրագրի № 25-ա հավելվածների ավանդների քանակը հաշվելու միջոցով: |

| Սյունակների № | Հետագրում ցուցադրվող սիմվոլներով տեղեկությունների բովանդակությունը | Հաշվետվությունները ներկայացնելու ժամկետները | Ցուցմունքներ հետագիրը կազմելու համար |
| --- | --- | --- | --- |
| | | միսը մեկ անգամ № 2 ձևի կազմում՝ յուրաքանչյուր ամսի վերջին օրը: | |
| 17 | Ավանդատուների քանակը գյուղական խնայողական դրամարկղներում . . | | Նույնը |
| 18 | Ավանդատուների քանակը քաղաքային և գյուղական խնայողական դրամարկղներում . . . . . . . . . .<br>Ուղարկում են միայն պետաշխնայդրամարկղների և պետվարկի հանրապետական, երկրային և մարզային վարչությունները . . . . . . . . | | Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները չեն լրացնում: |
| 19 | 1938 թվի համար բնակչության ավանդներին ավելացրած տոկոսներ քաղաքային խնայողական դրամարկղներում . . . . . . . . . . . . . . | | Ավելացրած տոկոսների գումարի մասին տեղեկությունները հաղորդվում են անձնական հաշիվների ամփոփագրերի առ 1/I տվյալների: Կենտրոնական և շրջանային խնայդրամարկղներն ուղարկում են մեկ անգամ՝ տարեկան հաշվետվությունը կազմելուց հետո: |
| 20 | 1938 թ. համար բնակչության ավանդներին ավելացրած տոկոսներ գյուղական խնայողական դրամարկղներում: . . . . . . . . . . . .<br>Տոկոսների գումարի մասին տեղեկությունները հանրապետական, երկրային և մարզային վարչություններն ուղարկում են սկսած 1939 թ. հունվարի 1-ից ամեն տասնօրյակում՝ մինչև տարեկան հաշվետվության կազմելն ըստ հանրապետության, երկրի կամ մարզի . . . . . . . . | | |
| 21 | Վճարված է բնակչությանը տարժանիգներից՝ կոպոններով, շահումներով և տիրաժային պարտատոմսերով: | Տրվում է ամիսը մեկ անգամ № 2 ձևի կազմում՝ յուրաքանչյուր ամսվա վերջին օրը | № 24 բալանսային հաշվի մնացորդն առ յուրաքանչյուր ամսի վերջին օրը բացառությամբ 8% փոխառության:<br>8% փոխառությամբ վճարված գումարները վորոշվում են № 210 արտաբալանսային հաշվի № 109 ձևի քարտով): |

| Սիմվոլների №№ | Հեռագրում գետեղվող սիմվոլներով տեղեկությունների բովանդակությունը | Հաշվետվություն ներկայացնելու ժամկետները | Ցուցմունքներ հեռագիրը կազմելու համար |
|---|---|---|---|
| 22 | Հանձնված են տարվա սկզբից մասհանումներ փոխառություններից՝ հանրապետական և տեղական բյուջեներին . . . . . . . . . . . . . . | Ուղարկվում է ամիսը մեկ անգամ № 2 ձևի կազմում՝ յուրաքանչյուր ամսի 1-ին տասնօրյակի համար (ամսի 10-ին) | № 105 ձևի մատյանի № 26 հաշվի մնացորդն առ ամսի 10 ը։ |
| 23 | Ընդամենը տրված են փոխառություններ . . . . . . . . . . . . . | Ուղարկվում է ամեն տասնօրյակում՝ № 2 ձևի կազմում | № 171 ձևի մատյանն ըստ № 35 հաշվի 4 սյունակի, աճող հանրագումարներով, 1937 թ. մարտի 1-ից։ |
| 24 | Ընդամենը մարված են փոխառություններ . . . . . . . . . . . . . . | | № 171 ձևի մատյանն ըստ № 35 հաշվի 9 սյունակի, աճող հանրագումարներով՝ 1937 թ. մարտի 1-ից։ |
| 25 | Փոխառություն ստացած անձանց քանակը . . . . . . . . . . . . . . | 25, 26 և 27 սիմվոլների տեղեկությունները տրվում են ամիսը մեկ անգամ № 2 ձևի կազմում՝ յուրաքանչյուր ամսի վերջին օրը։ | № 171 ձևի մատյանի, 3 սյունակ աճող հանրագումարներով 1937 թ. մարտի 1-ից № 23 ձևի մատյանի № 31 հաշվի աճող հանրագումարներով՝ 1937 թ. մարտի 1-ից։ |
| 26 | «Հաշվարկումներ Միութենական բյուջեի հետ» № 31 հաշվի մնացորդը . . . . . . . . . . . . . . . | | |
| 27 | «Փոխառությունների տոկոսներ» № 37 հաշվի մնացորդը . . . . . . . | | № 171 ձևի մատյանի 37 հաշվի 20 սյունակ, աճող հանրագումարներով՝ 1938 թ. հունվարի 1-ից։ |
| 28 | Վաճառված են 1938 թ. շահող փոխառության պարտատոմսեր . . . . | 28, 29, 30 և 31 սիմվոլների տեղեկությունները տրվում են № 3 ձևի կազմում՝ 1938 թ. հունիսի ընթացքում—ամեն տասնօրյակում, իսկ հետագայում՝ մեկ անգամ յուրաքանչյուր ամսի վերջին օրը | № 22 բալանսային հաշվի պահանջի շրջանառությունները աճող հանրագումարներով փոխառության իրացման սկզբից առանց ուղղիչ շրջանառությունների, ըստ № 102 ձևի մատյանի անձնական հաշվի տվյալների։ |

| Սիմվոլների № № | Հեռագրում զետեղվող սիմվոլներով անցկաց. թյունների բովանդակությունը | Համեմատության ներկայացնելու ժամկետները | Ցուցմունքներ հեռագիրը կազմելու համար |
|---|---|---|---|
| 29 | Գնված են 1938 շահող փոխառության պարտատոմսեր . . . . . . . | | № 22 բալանսային հաշվի պարտքի շրջանառությունները աճող հանրագումարներով՝ փոխառությունը բաց թողնելու սկզբից, առանց ուղղել շրջանառությունների՝ ըստ № 102 ձևի մատյանի անձնական հաշվի տվյալների։ |
| 30 | Գնված են 1929, 1930, 1932 և 1935 թ. թ. փոխառությունների պարտատոմսեր . . . . . . . . . . . . . . | | № 22 բալանսային հաշվի պարտքի շրջանառությունները աճող հանրագումարով՝ 193› թ. հունվարի 1-ից առանց № 102 ձևի, մատյանի անձնական հաշվի տվյալների լեղած ուղղել շրջանառությունների։ |
| 31 | Տրված են 1938 թ. շահող փոխառության պարտատոմսեր՝ փոխանակումն 1929, 1930, 1932 և 1935 թ. թ. փոխառությունների պարտատոմսերի . . | | Ըստ 1938 թ. փոխառության անձնական հաշվի տվյալների՝ № 106 ձևի մատյանում «արված և փոխանակում» սյունակում։ |

Հաստատված է ԽՍՀՄ Պետպլանին առընթեր ԺՏՀՎ-ի կողմից № 306 վորոշումով.

Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներն ուղարկում են վերադաս վարչությանը՝ հաշվետու ամսվա հետևյալ ամսի 2-ին։ Ինք. ԽՍՀ, յերկրների և մարզերի պետաշխխնայդրամարկղների և պետվարկի վարչություններն—միութենական հանրապետությունների վարչություններին մարզային բաժանում չունեցող միութենական հանրապետությունների վարչությունները—Գլխավոր վարչությանը՝ ամսի 7-ին, ՌԽՖՍՀ, ՈՒԽՍՀ, ԲԽՍՀ, Ուզբեկական ԽՍՀ և Ղազախական ԽՍՀ պետաշխխնայդրամարկղների և պետվարկի վարչությունները—պետաշխխնայդրամարկղների և պետվարկի գլխավոր վարչությանը՝ ամսի 11-ին։

ԽՍՀ Միության պաշտպանության ամրացման պետական փոխառության իրացման ամսական փոստային հաշվետվություն։

| Սիմվոլների №№ | Սիմվոլների տակ գետեղվող տեղեկությունների բովանդակությունները | Գումարը հազարավոր ռուբ. |
|---|---|---|
| | ՄՈՒՏՔ ԵՆ ՑԵՂԵԼ | |
| 08 | Քաղաքի և գյուղի բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժանորդագրությամբ · · · · · · · · · · | |
| 09 | Քաղաքի այլ բնակչության կոլեկտիվ բաժանորդագրությամբ և կանխիկ հաշվով վաճառումից · · | |
| 10 | Կոլտնտեսականների և գյուղական կոոպերացված տնայնագործների կոլեկտիվ բաժանորդագրությամբ, վաճառքը կոլտնտեսականներին կանխիկ հաշվով · | |
| 11 | Մենատնտես-գյուղացիների բաժանորդագրությամբ և վաճառքը մենատնտեսներին՝ կանխիկ հաշվով · | |
| 12 | Ընդամենը մուտք է յեղել փոխառությունից («08»-ից մինչև «11»-ը ներառյալ սիմվոլների ընդհանուր գումարը) · · · · · · · · · · · · · · · · · · · · | |

# ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա) փոխառության պարտատոմսերի իրացման, ըստ դրության առ 1-ն հուլիսի 1939 թ. յերկրի, մարզի, հանրապետության ______________ շրջանային (կենտրոնական) № ______________ խնայողական դրամարկղի համար:*

| | 1938 թ. | 1939 թ. | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| 1. Կոլտնտեսականների և մենատնտես-գյուղացիների հետ հաշվարկումներ անելու համար տըրված պարտատոմսերի գումարը (հանած վերադարձրածները . . . . . . . . . . . . . . . | | | |
| 2. Ձեռնարկություններին, հիմնարկություններին և գյուղական խորհուրդներին տրված պարտատոմսերի գումարը (հանած վերադարձրածները) | | | |
| 3. Խնայողական դրամարկղների կողմից անմիջականորեն կանխիկ հաշվով վաճառված պարտատատոմսերի գումարը . . . . . . . . . . . . | | | |
| Ընդամենը 1—3 սյունակներով . . | | | |
| 4. Ձեռնարկությունների, հիմնարկությունների, գյուղխորհուրդների և շրջանային ֆինանսական բաժնի գործակալների մոտ մնացած չիրացված պարտատոմսերի գումարը (№ 208 հաշվի մնացորդը) . . . . . . . . . . . . . . . . | | | |
| 5. Յենթակա յեր մուտք գրելու № 20 հաշվում (1—3 տողերի հանրագումարի գումարը, հանած 4 տողի հանրագումարի գումարը) . . . . . . | | | |
| 6. Մուտք է յեղել և մուտք է գրվել № 20 հաշվում . . . . . . . . . . . . . . . . . | | | |
| 7. Մուծումների վերադարձ և փոխանցումներ մյուս հաշիվներին ըստ № 20 հաշվի պարտքի . | | | |
| 8. Զուտ մուտքեր (6 տողի գումարը հանած 7 տողի գումարը . . . . . . . . . . . . . . | | | |

ՇՐՋԱՆԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ ՎԱՐԻՉ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

« » ______________ 1939 թ.

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հավելված № 4

# ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂՎԱԾՔ

№ 205 արտաբալանսային հաշվի «Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա) փոխառության» № 106 ձևի մատյանի անձնական հաշիվներից։

Ըստ դրության առ 1-ն հուլիսի 1939 թ.

____________ մարզի, յերկրի, հանրապետության ____________

____________ շրջանային (կենտրոնական) № ________ խնայդրամարկղի համար։

| ՎՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ | ՄՈՒՏՔ: Վերադարձված են շրջ. ֆինբաժնի գործակալների կողմից | ՄՈՒՏՔ: Վերադարձված են ձեռնարկ-հիմնարկ. և գյուղխորհուրդների կողմից | ՄՈՒՏՔ: Ստացվել են բաժանորդներին չհանձնված պարտատոմսերը | ՄՈՒՏՔ: Մուտքի մնացած հոդվածներ | ՄՈՒՏՔ: Ընդամենը մուտք | ԵԼՔ: Տրված են շրջ. ֆինբաժինների գործակալներին | ԵԼՔ: Տրված են ձեռնարկ-հիմնարկ. և գյուղխորհուրդներին | ԵԼՔ: Վաճառված են անմիջականորեն խնայդրամարկղների կողմից | ԵԼՔ: Ելքի մնացած հոդվածներ | ԵԼՔ: Ընդամենը ելք | Պարտատոմսերի մնացորդն առ 1-ն հուլիսի 1939 թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1938 թ. | | | | | | | | | | | |
| Անպայման շահող մաս | | | | | | | | | | | |
| տոկոսաբեր մաս . . . . | | | | | | | | | | | |
| Ընդամենը 1938 թ. | | | | | | | | | | | |
| 1939 թ. | | | | | | | | | | | |
| Անպայման շահող մաս | | | | | | | | | | | |
| տոկոսաբեր մաս . . . . | | | | | | | | | | | |
| Ընդամենը 1939 թ. | | | | | | | | | | | |
| Ընդամենը յերկու մասերով փոխառության իրացման սկզբից . . . | | | | | | | | | | | |

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ / ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ ՎԱՐԻՉ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

«____» ____________ 1939 թ.

A II/23845

104.

1940

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

FL0003168